

րաթայ եւ Գամբայ գահը կը հանէ (Հմմտ. Դիտտ. Հակա. Ա., 19, 5): Ինչպէս որ Արեւելեանին արքայն էր Որոնտէսը՝ Պիւկեստէսի բարեկամը, որուն բերնով Եւմենէս կը փորձէր նամակ գրել «Ասորոց գրով» (Հմմտ. Դիտտ. ԺԹ., 23, 3): Յետ ազեքսանդրեան խառնակութեանց շրջանին այս երկու կէտերը (316 եւ 301 տարիներուն) կը բացատրեն Հայաստանի վիճակը: Եւ երբ նաեւ հին հեղինակաց քով, որոնք հնագոյն աղբերց աւանդածն իրենց ժամանակի աշխարհագրական դրեց համեմատ կը բացատրեն, «Փոքր Հայք» ալ երեւան կու գայ, կամ ընդհակառակն ընդհանուր «Հայաստան» մը, «արքայ Հայոց» եւ նման բացատրութիւններ, պէտք է միշտ աչքի առջեւ ունենալ իրաց իսկական վիճակը, եւ դարձեալ այն աւատական դրութիւնը («նախարարութիւնը» են), որ կար արդէն Ուրարտեանց շրջանին, չզարգեցաւ Արամեանիներէն առաջ: Եւ աւելի ծաղկեցաւ Սելեւկեանց շրջանին: Ազեքսանդրի պայագատաց երկար խոտվարից ժամանակներէն ետքը՝ Սելեւկեանց զերիշխանութեան ներքեւ ինկած էր նաեւ Հայաստան: Բայց այս զերիշխանութիւնն, արդէն յաճախ անուանական, արզելք չէր որ իւրաքանչիւր «սատրապ» ինք զինքն անկախ զգար: Սատրապական քիչ շատ մեծ տներ կանուխէն իսկ այս ճամբան բնեցին եւ այսպէս կանգնեցաւ ո՛չ միայն Արիարաթեանց գահը՝ Գամբայ, Միհրդատեանց Պոնտոսը, Ատրպատէսի Ատրպատականը, այլ հետզհետէ նաեւ շատ աւելի մանր թագաւորութիւններ, ինչպէս Ալիարենէ, Կորդուք, Ուսայատան, Կոմագենէ, յիւմանակիցքը: Եւ ասոնք ալ զրամահատութեան իրաւունք կ'ունենան, որոնցմէ յատկապէս գամբայեանը եւ մանաւանդ պոնտականը յաճախ շատ զեղեցիկ կտորներ են: Սելեւկեանք չէին կրնար փոխել իրաց այս վիճակը, եւ յաճախ պատահած դժուարութեանց առջեւ կ'անուրի ինամութեամբ, ի հարկին նաեւ արշաւանքներով, որոնց արզելքը կ'ըլլար իրենց միշտ դատարկ գանձուն մի քիչ լեցուիլը երբեմն փոփոխութիւն մը իշխանի մը, եւ սակայն յետոյ իրերը հիմնապէս նոյն կը մնային: Այլապէս չեն եղած Հայոց իրերն ալ, եւ այս շրջանին բաւական դրամներ կան նաեւ Հայ արքայից, թէեւ եւ ո՛չ հատ մը գանուած է բուն Որոնտեանց

տնէն, ո՛չ ալ յաջորդ Արտաշէանց բաժնէն մինչեւ Տիգրան: Դրամները կը վերաբերին արեւմտեան Հայաստանի, յատկապէս Ծոփաց թագաւորութեան, եւ մաս մը՝ «Փոքր Հայոց», որոնք այս շրջանին կը սկսին կազմակերպուիլ, որչափ որ շարժելու տեղ թողուցած են Գամբայ եւ Պոնտոս եւ նաեւ մնացեալ Հայք: Դժբախտաբար նաեւ այս շրջանին յաճախ միայն հատակոտորներ կան հին մատենագիրներէ, այնպէս որ կան արքայք՝ որոնցմէ ունինք զըրամներ, բայց որոնց մասին զբաւոր տեղեկութիւն մը չէ հասած: Սակայն հատակոտորոց եւ այլ յիշատակարանաց օգնութեամբ եւ զրամոց ալ ուսումնասիրութեամբ կարելի եղած է քիչ շատ լուսաբանել արեւմտեան հիւսիսային (Փոքր Հայք) եւ մանաւանդ արեւմտեան-հարաւային (Ծոփաց) բաժիններուն վիճակը (Հմմտ. Բարբլոն, Արքայք Ասորոց, Հայաստանի եւ Կոմագենեայ, Պարիս 1898. Բարբլոն եւ Ռայնախ, «Փոքուն Ասիայ զրամներ», Բոյթ եւ ուրիշներ): Որոշ է կէտ մը. այս շրջանին՝ իբր մինչեւ Բ. դարու (Ն. Ք.) սկիզբները՝ պէտք է զանազանել «ծոփական» աշխարհները՝ հիւսիսայիններէն (Բարձր Հայոց): Ծոփաց (ի հարկէ ընդարձակ մտօք) կենդրոնն էր Արշամաշատ (Աշմուշատ են) շինուած զոնէ այն Արշամ արքայէն, որ բարեկամ էր Անտիոքոս Հեոտի, որ իւր եղբոր՝ Սելեւկոսի՝ դէմ մղած կռիւներու առեւ ստիպուած էր Միջագետքէն ապաստանիլ «Հայոց լեռները»՝ իւր բարեկամին (Պոլիբիոս. Գ., 17, իբր 235ին Ն. Ք.): «Արքային Արշամայ» զրամները տպական նմանութիւն ունին ժամանակին գամբայեանց (Արիարամեան 280—230): Ետո կարելի է որ Արշամ մըն էր նաեւ անանուն յիշուած արքայն (իբր 260ին)՝ Անտիոքոս Սոլմոսի մահուան տարիէն (Հակա. Միմոնի): Արշամաշատի զրեց վրայ տեղեկութիւն կու տայ Պոլիբեայ Հատակոտորը (Բ., 25): Արշամաշատ «մօտ» էր «Ի Դաշտն կոչեցեալ Դեղեցիկ ընդ մէջ Եփրատայ եւ Տիգրիսի», որուն արքայն էր «երիտասարդ» Ետարը (Քսերքսէս, իւր զրամները՝ «արքային Քսերքսէսի»), որուն հայրն արդէն զաղբեցուցած էր հարկ տալ: Անտիոքոս կ'արշաւէ բանակաւ, կը հասնի Արշամաշատ եւ կը պաշարէ: Ետարը նախ կը փախչի. բայց կասկածելով թէ երբ «արքունիքն» անուրի՝ կրնայ ամբողջ թագաւորութիւնը («այլ կողմանք արքայութեանն»)

Մ Բ Տ Ե Ջ Ի Վ Ա Ն Ք Ը

Վարդան Մամիկոնեանի անունովը ուսուցիչները նուիրականացած գաւառն է Արտաղ: «Այս գաւառ անկանի ի հարաւակողմն ի հարաւոյ արեւելից Մասսեաց, որպէս ցուցին րանք Խորենացոյն եւ մերձ ի Կողովրտ գաւառ Այրարատու ըստ որում դնէ թովմաս Մեծոփեցին (Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 202): «Այժմեան Մակու գաւառը մասամբ մը կը համապատասխանէ հին Արտաղ գաւառին» (Բնաշխ. Բառարան, Ա., էջ 325): Արդէն Վարդան Աշխարհազեր կը գրէր՝ «Արտաղ Մակու է, ուր կայ սուրբ Առաքեալն Թադէոս» (Saint-Martin, Mémoires, II, էջ 422): Մակուի մէկ մասը կը համապատասխանէ Ակէ գաւառին:

1. Ս. ԹԱՂԵՒ ՎԱՆՔԸ

Ս. Թաղէի վանքը հիմնուած է Արտաղ գաւառի Մակուի խանութեան Ղարաքիլիսա հայաբնակ զիւղէն հարիւր քայլ հեռու (Մանատրուկ դաշտի արեւմտեան մասը կազմող լեռնամէջ տափարակի եւ ձորաբերան հարթութեան վրայ), Աւարայր դաշտի հիւսիսարեւմտեան կողմը¹ (Արարատ, 1898, էջ 38 եւ 356): — «Նստած է փոս տեղ, ձորի մէջ եւ երեք կողմերից բարձրանում են լեռները» (Մուրճ, Բ., 1903, էջ 123):

Վանքը բաղկացած է կրկնակի տաճարներէ, որոնց չորս կողմը կառուցուած են միաբաններու կացարաններ եւ ուրիշ հարկաւոր չէնքեր՝ շրջապատուած բուրգաւոր պարիսպներով:

Տաճարին այժմեան հին բաժինը վերաշինած է Չաքարիա եպիսկոպոսը 1329ին, ինչպէս հիւսիսային պատի վրայ՝ լուսամուտին տակ գտնուած արձանագրութիւնը կը ցուցնէ՝ «Այս տաճար լուսակիր եւ երկնանման առկայացեալ հաստատադոյն հիմամբը ի վերայ աստուածաբնակ շիրմի սուրբ Առաքելոյս Թադէոսի, որ ըստ բազմատեսակ յանցանաց մեր զկործանումն էտո ի շարժէ: Իսկ ես նուստ սպասուոր նմին Չաքարիա

¹ «Հեռի ի Պայեղիտ քաղաքէ իբրեւ 16 ժամու, բնակեալ ի միաբանից, եկեղեցի նորա քաղաքէն կոփածոյ հանդերձ կաթուղիկէ: Թեմ մենաստանիս ձգի մինչեւ ի Սոյ, ի Չորս, ի Սայմատ եւ ի Գէլիլի» (Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 251): — Վարդան Աշխարհազեր շատ ընդհանուր կը գծէ վանքիս գտնուած վայրը (Հմմտ. իր յառաջբերութիւնը՝ վերը):

Եպիսկոպոս որդի պարոն Մա(նուէլ)ին կառուցութեամբն Աստուծոյ սկիզբն արարի կրկին (նորո)գութեան առաւելեալ քան գառաջինն ի ժամանակի սաստիկ նեղութեան եւ հալածանաց քրիստոնէից, որ բազում եկեղեցիք քակտին: Վասն որոյ արձանագրեցաք պիշատակս մեր առ ի յիշատակել զմեզ առաջի մեծին Աստուծոյն եւ անարիւն զենմանն զառինն Աստուծոյն հանդերձ ճնօղօք եւ զարմիւք եւ զաջորդն մեր զոնէր Տիրացուն, այլ եւ զհարազատ եղբարս մեր զՊետրոս եւ զՄարգիս, որք ըստ կարութեան նպաստաւորք եղեն ընչիւք: Կատարումն թվին ՉՀԼին» (1329): Եւ ինչպէս թուեան՝ Ստորագրութիւն կաթ. էջմիածնի եւ հինգ գաւառաց Արարատայ, էջմիածին 1842, էջ 350, Փրանգեան, Ատրպատական, Թիֆլիզ, էջ 28. Մուրճ, Բ., 1903, էջ 125. Արարատ, 1898, էջ 89):

Չաքարիա զայն շինել տուած է կապտագոյն քարերով՝ զանոնք բերել տարով Գարբուլաղի քարահանքէն, որ կը գտնուի Գարայնի զիւղի մօտերը: Տաճարի այն բաժինը ունի խաչաձեւ կաթուղիկէ, երկու խորան, երկու սեղան, հինգ լուսամուտ. — զմբէթի վրայ ալ կայ չորս լուսամուտ: Գմբէթը անսիւն է եւ հաստատուած կամարներու վրայ: Սեղանի վրայ կը բարձրանայ քարաչէն, քանդակազարդ եւ զմբէթազարդ խաչկալը — դռներով եւ կամարներով (Արարատ, 1898, էջ 39): Խաչկալին² վրայ կայ այս արձանագրութիւնը՝ «Ենորհին Աստուծոյ եւ կարողութեամբ նորին կանգնեցաւ զեղեցկայարմար եւ զեղեցկափայլ խաչակալս ի յառաջնորդութեան ժամանակի Գէորգ վարդապետին. արդ որք հանդիպիք տուք զոյրոմին, եղև կատար շինմամբ նորին ի մերս թուօջ ՌՄԽԻն» (1793, Արարատ, 1898, էջ 89): Սեղանին առջեւի մասը զարդարուած է խորաքանդակ սիրուն նկարներով եւ արձանագրութիւններով:

Սեղանին խաչկալի մուտքի դռները կը ներկայացնեն (կտաւի վրայ նկարուած) աջ կողմը Ս. Թաղէոս — երիտասարդ մը զեզարդը ձախ ձեռքին եւ զաշոյնը աջ ձեռքին մէջ — իսկ ձախ կողմը Ս. Բարթոլոմէոս — ալեւոր մը՝ ձեռքին մէջ Տիրամօր պատկերը: Ս. Թաղէոսի գրութիւնն է՝ «Յիշատակ է Սիմէօնի արքեպիսկոպոսի եւ յաջորդ», որ կը շարունակուի Ս. Բարթոլոմէոսի կողմը՝

² Խաչկալին քանդակները սքանչելի են (Արարատ, 1898, էջ 89):



«Արբոյ տաճարիս առաքելոյն Թաղէոսի թվ. ՌՄԿԷ» (1816) : Սիրուն է եւ բեմքարի պատկերը, որ կը ներկայացնէ Ս. Աստուածածին՝ Յիսուս գրկած, թաղակիր, զոյգ հրեշտակներ բռնած են թաղը, որուն վերեւը կը տեսնուի Հայր Աստուած : Տիրամայրը բազմած է : Իր աջին՝ կը նկատուի Ս. Թաղէոս, իսկ ձախին՝ Ս. Բարթոլոմէոս : Պատկերին վրայ գրուած է՝ «Թուին Փրկչին ՌՊԺԱ. (1811) եւ առաջնորդութեամբ ուխտիս Տեառն Սիմէօն արքեպիսկոպոսին տէր Բրդն. Խճ. Տր. Նկչ. : Այս սուրբ պատկերս ի վանս արբոյ առաքելոյն Թաղէոսի մաքուր շիրմի Կարնեցի Բօսենաց մահտեսի Յարութիւնէ յիշատակ վասն իւր կենակցւոյն մահտեսի Սանուսին եւ որդւոյն մահտեսի Յակոբին, մահտեսի Սիմէօնին եւ տիրացու Գէորգին եւ այլ ամենայն կենդան» (Արարատ, 1898, էջ 89) : Սեղանին խաչվառը նկարել տուած է Սիմէօն արքեպիսկոպոսը, անոր մէկ կողմը գրուած է՝ «Ի նորոգման արբոյ աթոռոյս նկարեցաւ խաչվառս ձեռամբ Սիմէօն սրբազան արքեպիսկոպոսին, ետ յիշատակ նորակերտ արբոյ տաճարիս», իսկ միւս կողմը կայ՝ «Յիշատակ է սրբազան Առաքելոյն Թաղէոսի աթոռոյն առաջնորդ Սիմէօն արքեպիսկոպոսիս ծնողացս քերցս...» :

Այս տաճարին հարաւային խորանին տակ թաղուած են Չաքարիա եւ Մինաս վարդապետները : Առաջինին մարմարեայ տապանաքարին վրայ կը կարդանք՝ «Այս է տապան Տեառն մեծի Չաքարիաս վարդապետի սուրբ աթոռոյս, սա բա...րի, որ յաջորդե(ա)ց թ. տարի, էր սա երկրաւ Ղափանեցի, հայր էր սա անարժանիս ՌՃՂԲ (1743)» : Երկրորդին մարմարեայ տապանաքարին վրայ գրուած է՝ «Տապանս սայ է եղիւի, Մինաս անուն վարդապետի, որ յաջորդե(ա)ց տանս մեծի, ներդրագմանց ժամանակի, ծառայ էր սա Տեառն մեծի, Չաքարիաս վարդապետի ՌՄ (1751)» :

Հին տաճարին մէջ ասոնցմէ զատ կան արձանագրութիւններ վանեցի քանի մը ուխտաւորներէ եւ այցելուներէ (Արարատ, 1898, էջ 90) : Այսպէս՝ Հին կաթողիկէի հիւսիս արեւմտեան կամարասիւնին որմի վրայ գրուած է՝ «Ես վանեցի ջրպաշ Թուսենց լուսահոյի մահտեսի Գասեպարի որդի Փիրիջանս եկի» : Ասոր կից կայ՝ «Ես վանեցի ջրպաշ Թուսենց լուսահոյի մահտեսի Գասեպարի որդի Փիրիջանս եկի սուրբ առաքելոյդ

Թաթէոսի զերեզմանն համբուրեցի, ով ոք հանդիպել զայս զիրս կարգայ հայր մեղայիս յիշեցէ» : Ասոր մօտը՝ «Ես վանեցի Գասեպարի որդի Ախիճանս յեկի սուրբ ուխտս ավի ՌՄԻԵ Ապրիլի ԻԸ 1225» (1776) : Նոյն որմին վերոյիշեալ գրութիւններու տակ գրուած է՝ «Ես Արտակերցի մեղապարտ զրիչ Ղուկաս դպիրս գրեցի հայ թվին ՌՄԼԴին» (1785) : Ասոր կից կը կարդացուի՝ «Ի յուխտ եւ յերկրպագութիւն սրբոյս աթոռոյս եկի ես Վանեցի մահտեսի Գասեպարի որդի մահտեսի Փիրիջանս ի ՌՄԾԵ, 1255, Մայիս ԺԵ (1806, Արարատ, 1898, էջ 90) : — Հին տաճարը շարժէ եւ ուրիշ պարագաներէ բաւական փաստուած է եւ քանի մը անգամ նորոգող ձեռքեր տեսած : Ասոր տանիքը սալալայտակուած է :

Այս հին շէնքին կից բարձրացած է՝ «Նոր փարթամաչէն զարդարուն եւ զեղեցկաքանդակ Տաճարը : Ան ձեւով, կերտուածքով եւ մեծութեամբ նման է էջմիածնի տաճարին : Դժբախտաբար ներքինը աննպաստ պարագաներու բերումով լիւսպէս չէ աւարտած եւ անշուք ու մերկ է, մինչ արտաքինը շքեղ : Ամբողջ տաճարը զօտիւսաբար ժապաւէնանման քանդակներով զարդարուած է : Ծիւղուած է սպիտակ՝ պանրագոյն քարերէ որոնք բերուած են Գրիբուրաղ (Շաւարշան) գիւղի մօտէն : Տաճարն ունի տասնութէկ լուսամուտ, երեք դուռ, երկու սեղան : Գմբէթը օժտուած է ութ լուսամտով եւ կը հանդիպէ չորս հսկայ սիւներու վրայ : Արեւմտեան դրան ձակատը զարդարուած է սիրուն քանդակներով, իսկ զլիսուն վրայ ամբարցուած է մարմարեայ տախտակ մը պարսկերէն արձանագրութեամբ : Տաճարին արեւելեան, արեւմտեան եւ հիւսիսային պատերը զարդարուած են նկարաքանդակներով եւ բազմաթիւ արձանագրութիւններով, նաեւ ներքին սիւներու ձակատներու եւ աւազանին վրայ կան արձանագրութիւններ» (Արարատ, 1898, էջ 39) :

«Յիշատակ է սուսն վերանդիչ սրբոյ Աթոռոյս առաջնորդ Սիմէօն արքեպ. ի էջմիածնեցոյ եւ ծնողաց նորին Մուրատին եւ Գայեանին թվին ՌՄԾԹ» : — «Յիշատակ է սուսն սրբոյ Աթոռոյս առաջնորդ Սիմէօն Արքեպիսկոպոսի էջմիածնեցոյ եղբոր Սաչատրին եւ քեռն ... րին եւ ամենայն զարմիցն թվ. ՌՄԾԹին (1810)» : — «Այլ եւ յիշատակ է Բայազեցի մահտեսի Ափրիկի որդի մահտեսի Բարսեղին եւ Պետրոսին եւ ծնողացն Շահապարի մահտեսի Լալէի որդի Աւետիսին եւ մահտեսի Բարսեղի կողակցի Մարթան ՌՄԿԳ» : — «Յիշատակ է սուրբ ավազանս Բայազեցի մահտեսի Գօրօի որդի մահտեսի Մընացականին ՌՄԿԳին Յուլիս է (1815)» : — «Սուրբ Խաչս բարեխօս էլօին եւ կնոջն Շամամին եւ որդուն Պետրոսին» : — «Յիշատակ է աւազանս Սեղուկեցի հանգուցեալ մահտեսի Գերոմի որդին մահտեսի» : — «Յիւսուս Գրիստոս. Ղորղանէցի Դաւիթ կաթողիկոսի եղբայր Մէլիքեան Բարսեղին Երէվան վանքոյն Սեղուկեցի Բարսեղին մեծն, եւ կողակցոյն յիւրոյ եւ որդոցն Չօշարին Ռուստամին եւ Մկուտըշին եւ տըստերացն եւ հանգուցեալ ծնողացն եւ համայն կենդանեաց եւ ննջեցելոցն ամին թվին ՌՄԿԲ (1813)» : — «Տէր Աստուած Յիսուս Բրիստոս : Յիշատակ է սիւսն մէլիք Ներսիսի որդի միլիք Նավասարդ միլիք Մօսէս միլիք Բալասան միլիք Ստեփան եւ միլիք Աղաջան. երեքին եղբարք նորոգեցաք վասն հողոց նախնեաց մերոց Արծեւունի Սենեքերիմ Դաւիթ բեկեան թվին ՌԿԻ (գուցէ ՌՄԿ)» : — «Կ. դամբարանանուն կոչի» : — «Հոգածութեամբ յառաջնորդ Սիմէօն Արքեպիսկոպոսի եւ պատրիարքութեան սուրբ Սաղիմայ Թէոդորոս կաթողիկոսին յիշատակ է սիւսն սուրբ Սաղիմայ իմզադէի եւ նվիրակ տեառն Ստեփան վարդապետին եւ ծնողացն մահտեսի Մելքոնին Հոխիսիմին եւ եղբարցն մահտեսի Սարգիսին եւ տիրացու Յարութիւնին եւ Յակոբին եւ ամենայն զարմից նորին թվ. ՌՄԿԳ (1815)» : — «Ոգածութեամբ յաջորդ Սիմէօն բազմաշխատ կաթողիկոսին յիշատակ է սիւսն Մարդեցի տէր Սաչատրին եւ կողակցուն. նաեւ Ղարաբախեցի տէր Պետրոսին եւ կողակցուն, նաեւ Չլաղառ պարոն Աստուածատուրին եւ կողակցուն ՌՄ...» : — «Թվ. Չնէ. այս է հանդիստ...» (Արարատ, 1898, էջ 90—91) :

Ս. Թաղէի վանքի արդի վիճակը աննախանձելի է : Հայկ Աճէմեան կը գրէր՝ «Հիմայ թէեւ կանգուն է տաճարը, բայց ամայի եւ կիսաւերակ բնոյթ ունի» (Ընդարձակ Տարեցոյց Աղղ. Հիւանդանոցի, Կ. Պ. 1927, էջ 387) : Կարեւոր հարց է՝ Արտագու Ս. Թաղէի եւ Ծործորու Ս. Աստուածածնի վանքերը միեւնոյն վանքն են թէ տարբեր տարբեր : Հ. Ինճիճեան եւ Հ. Էփրեկեան երկու դանազան վանքեր կը համարին (հմմտ. Ստորագրութիւն, էջ 205 եւ Բնաշխարհիկ Բառարան, Բ., էջ 251) : Հ. Չամչեան կը գրէ իր Պատմութեան ցանկին մէջ (էջ 155)՝ «Ծործորու վանք, այն է ուխտ սուրբ Աստուածածնի ի վիճակ Թաղէի յԱրտագ զաւատի» (հմմտ. եւ Պամ., Գ., էջ 271) : Հ. Չարբահանէլեան (Պամ. հայ. դարութեան, էջ 757) եւ Հ. Պոսուրեան (Բազմավէպ, 1906, էջ 257) կը համարին միեւնոյն վանքը : Ծործորու վանքին կը հանդիպինք զլիսաւորարար հետեւեալ տեղիքներուն մէջ՝ ա. Դանիէլի մեկնութիւն մը կ'ընծայուի Յովհ. Երզնկացոյն «յօրինեալ ի ՉԿԸ թուիս Հայոց յԱրտագ զաւատի ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի Ծործորու կոչեցեալ» (Չարբահան., Անդ., էջ 765) : բ. Եօթն խորհրդոց (Ս. Թովմայի) թարգմանութեան յիշատակարանին մէջ կը կարդացուի՝ «... Յովհաննէս Երզնկացի որ այժմ կոչիմ Ծործորեցի, մեծաւ թախանձանօք թարգմանեցի, զսա ի հայ բարբառ... ձեռնտուութեամբ արհեպիսկոպոսին Չաքարիա, Ս. Առաքելոյն Թաղէոսի վերադիտողի... թարգմանեալ եւ գրեալ ի դուսն Ծործորու» (Բզմ., 1906, էջ 257. Տաշեան, Մայր Յուց., էջ 777 եւ Մատենադարան թարգմ. նախնեաց, էջ 274—275) : գ. Մատթէի մեկնութեան մէջ Յովհաննէս կը գրէ՝ «Ապիկար ոգիս Յոհաննէս Երզնկացի սպասաւոր բանի, բնակեալ ի վիճակ սուրբ առաքելոյն Թաղէոսի ի վանս Ծործորու կոչեցեալ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս» (Ալիշան, Հայագատում, էջ 513. հմմտ. Տաշեան, Մայր Յուց., էջ 338. Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 205) : դ. Փիրիսի գրութիւններու յիշատակարանի մէջ՝ «Յորժամ գրեցաւ մատեանս այս

Ս. Թաղէի վանքի³ արեւմտեան կողմը, պարսպէն դուրս, յատուկ շրջապատի մը մէջ կը գտնուին տնտեսական պիտոյքներու բակը, ձիթահանքը եւ գոմերը : Երջապատի բոլոր շինութիւնները շինուած են կաւաքարով եւ հասարակ շաղախով : Խցերու մեծ մասը թաղակապ է :

³ Վանքիս մասին հմմտ. նմանապէս՝ Strzygowski, Die Baukunst der Armenier und Europa, Wien 1918, էջ 651—652 եւ Tischer, Der christliche Orient, 1887, November :

Ս. Թաղէի վանքի արդի վիճակը աննախանձելի է : Հայկ Աճէմեան կը գրէր՝ «Հիմայ թէեւ կանգուն է տաճարը, բայց ամայի եւ կիսաւերակ բնոյթ ունի» (Ընդարձակ Տարեցոյց Աղղ. Հիւանդանոցի, Կ. Պ. 1927, էջ 387) : Կարեւոր հարց է՝ Արտագու Ս. Թաղէի եւ Ծործորու Ս. Աստուածածնի վանքերը միեւնոյն վանքն են թէ տարբեր տարբեր : Հ. Ինճիճեան եւ Հ. Էփրեկեան երկու դանազան վանքեր կը համարին (հմմտ. Ստորագրութիւն, էջ 205 եւ Բնաշխարհիկ Բառարան, Բ., էջ 251) : Հ. Չամչեան կը գրէ իր Պատմութեան ցանկին մէջ (էջ 155)՝ «Ծործորու վանք, այն է ուխտ սուրբ Աստուածածնի ի վիճակ Թաղէի յԱրտագ զաւատի» (հմմտ. եւ Պամ., Գ., էջ 271) : Հ. Չարբահանէլեան (Պամ. հայ. դարութեան, էջ 757) եւ Հ. Պոսուրեան (Բազմավէպ, 1906, էջ 257) կը համարին միեւնոյն վանքը : Ծործորու վանքին կը հանդիպինք զլիսաւորարար հետեւեալ տեղիքներուն մէջ՝ ա. Դանիէլի մեկնութիւն մը կ'ընծայուի Յովհ. Երզնկացոյն «յօրինեալ ի ՉԿԸ թուիս Հայոց յԱրտագ զաւատի ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի Ծործորու կոչեցեալ» (Չարբահան., Անդ., էջ 765) : բ. Եօթն խորհրդոց (Ս. Թովմայի) թարգմանութեան յիշատակարանին մէջ կը կարդացուի՝ «... Յովհաննէս Երզնկացի որ այժմ կոչիմ Ծործորեցի, մեծաւ թախանձանօք թարգմանեցի, զսա ի հայ բարբառ... ձեռնտուութեամբ արհեպիսկոպոսին Չաքարիա, Ս. Առաքելոյն Թաղէոսի վերադիտողի... թարգմանեալ եւ գրեալ ի դուսն Ծործորու» (Բզմ., 1906, էջ 257. Տաշեան, Մայր Յուց., էջ 777 եւ Մատենադարան թարգմ. նախնեաց, էջ 274—275) : գ. Մատթէի մեկնութեան մէջ Յովհաննէս կը գրէ՝ «Ապիկար ոգիս Յոհաննէս Երզնկացի սպասաւոր բանի, բնակեալ ի վիճակ սուրբ առաքելոյն Թաղէոսի ի վանս Ծործորու կոչեցեալ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս» (Ալիշան, Հայագատում, էջ 513. հմմտ. Տաշեան, Մայր Յուց., էջ 338. Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 205) : դ. Փիրիսի գրութիւններու յիշատակարանի մէջ՝ «Յորժամ գրեցաւ մատեանս այս

Ս. Թաղէի վանքի³ արեւմտեան կողմը, պարսպէն դուրս, յատուկ շրջապատի մը մէջ կը գտնուին տնտեսական պիտոյքներու բակը, ձիթահանքը եւ գոմերը : Երջապատի բոլոր շինութիւնները շինուած են կաւաքարով եւ հասարակ շաղախով : Խցերու մեծ մասը թաղակապ է :

Ս. Թաղէի վանքի³ արեւմտեան կողմը, պարսպէն դուրս, յատուկ շրջապատի մը մէջ կը գտնուին տնտեսական պիտոյքներու բակը, ձիթահանքը եւ գոմերը : Երջապատի բոլոր շինութիւնները շինուած են կաւաքարով եւ հասարակ շաղախով : Խցերու մեծ մասը թաղակապ է :

³ Վանքիս մասին հմմտ. նմանապէս՝ Strzygowski, Die Baukunst der Armenier und Europa, Wien 1918, էջ 651—652 եւ Tischer, Der christliche Orient, 1887, November :

Թուական Հայոց ՉճԿԷ (1318) եւ թագաւոր Օշին եւ կաթողիկոս տէր Կոստանդին եւ բնակութիւնս Ծործորու վանք եւ տեղոյս առաջնորդ տէր Չաքարիայ եւ վարժապետ եւ ուսուցիչ Յոհաննէս, ստացող գրոյս եւ անուն գծողիս Մխիթար» (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. 2104. հմմտ. Փիլոնի Երբայեցւոյ մնացորդքի Հայո. Վեհեա. 1826, էջ 622):

Ե. Աստուածաշունչի մը յիշատակարանին մէջ՝ «Չաստուածեղէն դանձիւ ստացողն գերջանիկ վարժապետն Եսայեան յիշեսլիք ի Բրիտանոս: Ընդ նմին եւ զնուստս գծող սորին զՅովհաննէս սպասաւոր բանի Երզնկացի որ եւ Ծործորեցի հանդերձ ծնողօք, որ եւ գրեցի զսա յըստ մեզ մարդեղութեան թուին Յիսուսի Բրիտանոսի Տեան մերոյ ՌԳՃ եւ ժԸ եւ ըստ Խորովային Տօմարին ՉԿԷ» (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. 206):

Գ. Մեր Մատենադարանի Թ. 646 Ձեռագիրն է՝ «Քարոզ խրատական բանից Յովհաննու Երզնկացւոյ Պլուզ եւ Ծործորեցի կոչեցելոյ հանդերձ յաւելուածով ինչ» (Ոսկեան Հ., Մայր Յուց., Բ. հատ., Թ. 646, անտիպ):

Է. «էր սա (Յովհաննէս Վրդ.) մականուամբ Ծործորեցի կոչի վասն Չորակ դեղջին... յայնմ ժամանակի այս Յովհաննէս ալ Երզնկոյ լինելով եւ բնակելով ի վանս Ծործորեցի» (Գրիգոր Դարանադեցի, Ժամանակագրութիւն, էջ 401):

Այս վկայութիւններու եւ տեղիքներու վրայ յենելով հաւանական կը թուի թէ՛ Ս. Թաղէի եւ Ծործորու վանքերը միեւնոյն վանքն են: Գուցէ անոր եկեղեցիներէն մին նախապէս կոչուած է Ս. Աստուածածին եւ միւսը Ս. Թաղէոս եւ կամ նախապէս թեմը Թաղէոսի վիճակ եւ վանքը Ս. Աստուածածին անուանուած եւ այս քանի որ առաջնորդարանը մէկ հատ էր կնքուած է՝ Ս. Թաղէոսի վանք անունով:

Ս. Թաղէի վանքի հիմնարկութեան թուականն ու պարագաները կը մնան մութ: Հաւանօրէն Ս. Թաղէոս կոչուած է այս վանքը, «որովհետեւ յայտ աննէ թէ յայնմ վայրի եղեւ կամ կատարումն նորին սրբոյ

Առաքելոյն (Թաղէոսի) եւ ընկերացն եւ կամ յաւետ զիւս եւ հանդիսս նշխարացն, քանզի յայս անուն կոչէ զայն Թովմա Արծրունի Դ. 11» (էջ 259). «Գրէ առ սուրբ եպիսկոպոսն Գրիգոր Ամատունեաց տանն, որ նստէր ի հանդստի սրբոյն Թաղէոսի առաքելոյն Արգողական դաւառի» (Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 203—204): Ս. Թաղէոսի նշխարներու գիւտն եղած կ'երեւայ կամ հինգերորդ դարու վերջերը եւ կամ ութերորդ դարու սկիզբները (հմմտ. Արարատ, 1898, էջ 39): Հետեւաբար վանքի հիմնարկութիւնն ալ գուցէ այդ շրջաններուն եղած ըլլայ՝ եւ կամ աւելի յետնագոյն շրջանի մը, քանի որ ուշ ատեն է որ իրբեւ վանք (այլ ոչ՝ վիճակ) կը յիշուի: ԺԳ. դարուն՝ կը յիշուի արդէն իրբեւ հին վանք, որ քանդուած ու ամայացած է: Հոն այդ դարուն կը տեսնենք Յովսէփ վարդապետը, որ Յովհ. Վանական վարդապետին աշակերտն է եւ կաթողիկոսին օժանդակութեամբն եւ Անդուն նուի թոյլատուութեամբը՝ «յոյով ժամանակս» զժախտարար «անբնակ» մնացած վանքը կը վերանորոգէ: Կոստանդին կաթողիկոսը կը հրամայէ՝ «տալ նմա (Ս. Թաղէի) վիճակ զըջակաց դաւառն եւ զքաղաքս եւ ոսկի յոյով ի շինութիւն դաւթին, որ շինէր վարդապետն Յովսէփ յետ աւերածոյն որ ի Թուրքացն եւ ի հինին Վրաց, քանզի յոյով ժամանակս անբնակ էր ի մարդոյ եւ ամայի: Եւ Յովսէփայ երթեալ առ զօրագլուխ Թաթարին, որում անուն էր Անդուն նուին, որոյ իջեւանքն իւր յաւուրան ամարայնոյ հուլ էր ի գերեզմանն առաքելոյն Թաղէոսի եւ նորա հրամանաւ սրբեալ գեկեղեցին եւ նաւակատիս կատարեալ շինեաց զվանս եւ ժողովեաց ի նա կրօնաւորս բազումս» (Կիրակոս, էջ 174 եւ 185): Յովսէփ վարդապետը՝ եւ միանգամայն Արտագու եպիսկոպոսն՝ երջանկութիւնը կ'ունենայ վայելու իր ջանքերուն պտուղը եւ վանքին բարգաւաճ վիճակը (Չամչ. Պատմ. Հայոց, Գ., էջ 230): Սակայն սեւ օրեր կը տեսնէ Տիրացու եպիսկոպոսը: Նաւուզի զօր-

⁷ Ձեռնոր Գլակ կը գրէ՝ «Արտագլուխս ի Հանդիստ Ս. Առաքելոյն Թաղէոսի...» (Պատմ. Տարօնոյ, էջ 21): — Հ. Չարբէնեան կը գրէ՝ թէ աւանդութեան համեմատ Ս. Թաղէի վանքն առաքելաչէն է (Պատմ. Դպր., էջ 757):
⁸ 1113ին Ս. Թաղէոս կը յիշուի իր աթոռակալութիւնը որ նախապէս Աղթամարի կաթողիկոսութեան համար էր (Ս. Անեցի, Ժամանակագրութիւն, էջ 124. հմմտ. Ակինեան Հ. Ն., Գաւազանագիրք Կաթ. Աղթամարայ, էջ 11):

⁵ Հմմտ. «Վարդապետն հոգակաւոր Յօհան Ծործորեցի» (Տաշեան, Մայր ցուց., էջ 115): — Ծանօթ է Գրիգոր Ծործորեցի միաբանողը (հմմտ. Ալիշան, Սիւսական, էջ 395):
⁶ Ծործորու գիւղին անունովը կոչուած Ծործորու Ս. Աստուածածին վանք կամ վարդապէս Ծործորու վանք:

բերը, կը գրէ Օրբէլեան (Պատմ. Նահանգին Սիւսական, հրտ. Շահնաղարեան, էջ 221—222): «Ըմբռնեցին եւ զեպիսկոպոսն Առաքելոց (1294/95ի)՝ զՏէր Տիրացուն, ազգի ազգի անարգանօք ձողեցին եւ առին զամենայն ինչս նորա, բայց ի վանքն նորա որ էր շիրիմ սուրբ առաքելոյն Թաղէոսի քանդեցին զշինուածս տանցն, աւերեցին, կողոպտեցին եւ ի սպառ կործանեցին»: Տիրացու եպիսկոպոսն իր ժամանակին մեծ դէմքերէն եղած է: Իրեն այցի եկած են Արտագու վանքին մէջ Հայոց Լեւոն թագաւորը եւ Թորոս փիլիսոփան, որ հետեւեալ զեղեցիկ ու դրուատալից սողերը թողուցած է՝

«Եւ յայնժամ խորհուրդ ի մէջ առեալ թագաւորն Հայոց բոլոր ուխտիւն եկեղեցւոյ... առաքեն զիմս նուաստութիւն եւ զաւրելի եւ զանդակից եղբայրն իմ զպատուելի եպիսկոպոսն Թումաս յաշխարհս արեւելից առ ի մեծարանս եպիսկոպոսաց եւ իշխանաց զալ վերստին նորոգել զաթոս սուրբ Լուսաւորչին եւ մեզ ի հրամայեալ թագաւորէն եւ ի սուրբ ժողովոյն յառաջագոյն զալ ի զիրս սուրբ Առաքելոյն Թաղէոսի առ ի գերահոգակ եւ արժանապատիւ եպիսկոպոսն տէր Տիրացուն, որ էր առաջնորդ ի սուրբ ուխտիս Թաղէոսի առաքելոյ եւ յայնմ ժամանակի փայլէր իրբեւ զձա՛ վառեալ ի մէջ գիշերի, որ էր նաւահանդիստ վտանգելոց, քաղցիւր եւ ծարաւելոց շնորհօք սուրբ Առաքելոյն: Եւ Բ. ամառ յառաջ եկեալ սուրբ արքայն Հայոց Լեւոն բարի եւ անուցանող եւ երախտաւոր տէրն իմ յայս սուրբ ուխտս եւ բազում սէր զտեալ արքայն Հայոց ի սիրոյ եպիսկոպոսէս տէր Տիրացուէ: Նաեւ ես նուաստս Թորոս վայելեալ ի սէր սորա» (Արարատ, 1911, էջ 223—224):

Ս. Թաղէի կարող առաջնորդներէն եղած է Չաքարիա, որուն օրով 1315ին արդէն վանքը վերստին ծաղկումի մէջ է եւ Լամբրոնացի Սաղմոսաց մեկնութեանսկիզբը կ'ըլլայ՝ «Ի սուրբ եւ յերկնահանգէտ ի հոգակաւոր ուխտս ի յաթոսս եւ ի հանդիստս սուրբ Առաքելոյն Թաղէոսի ընդ հովանեաւ ամենազաւր աղոյն Յիսուսի, առ ոտս սուրբ

եւ աստուածային արեամբ ներկեալ նշանիս սուրբ զեղարդեանս եւ սուրբ կուսին Սանդիտոյ եւ այլ բազմահաւաք սրբոցս... յառաջնորդութեան այնմ նահանգիս... տիեզերալոյս եւ աշխարհածաւալ... Տէր Չաքարիայի... (1315ին)» (Մատ. Ն., Յուց. հայ. Ձեռ. Սեւանայ, էջ 20—21):

Չաքարիա իր դարուն յայտնի դէմքերէն կ'ըլլայ եւ յարաբերութեան մէջ կը մտնէ ժամանակակից մեծ անձերու հետ:

Ներսէս վարդապետ կը գրէ թէ՛ Աստուածաշունչի արտագրութեան համար՝ «Գնացի ի սուրբ Առաքելոյն Թաղէոս առ Տէր Չաքարէ արքեպիսկոպոս եւ նա ես ինձ Շ. դրամ (Ալիշան, Հայաստան, էջ 547): Չաքարիա ջերմ յարաբերութեան մէջ էր Յովհաննէս Երզնկացի կամ Ծործորեցի վարդապետին հետ, որ Ծործորու վանքի մէջ կը բնակի եւ կ'ուսուցանէ: Թովմաս Ագուլինացիի Յաղագս է. խորհրդոց գրքին մէջ կը կարդանք՝ «... որում (այն գրքին) տեսչացայ հոգւով նուաստ ոգիս եւ յոյժ կարօտ բանի Յովհաննէս որ այժմ կոչիմ Ծործորեցի եւ մեծաւ թախանձանօք թարգմանեցի զսայ ի հայ բարբառ հրամանաւ պապին Հոռոմայ եւ ձեռնառութեամբ արհեպիսկոպոսին տէր Չաքարիայի առաքելոյն Թաղէոսի վերադիտողի...: Գրեցաւ զիրս այս խորհրդոյն ի թիւն Տեանն մերոյ Յիսուսի Բրիտանոսի ՌԳՃԻՆ (1325) յամսեան Հոկտեմբերի Բ. Բ. ամառ յառաջ թարգմանեալ եւ ի թիւ Հայոց ՉՉ (1321) թարգմանեալ եւ գրեալ ի գունն Ծործորու ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, որոյ ողորմութեամբն եւ շնորհօքն եղեւ կատարումն սորին» (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. Թ. 560): Նմանապէս Բարթողիմէոս յատին եպիսկոպոսին Քարողղբի Նախերգանքին մէջ կայ՝ «Եւ թարգմանեցաւ զիրքս այս ի ժամանակին յորում էր թիւ մարդեղութեան Հայոց Տեանն Յակոբայ, որ էր յոյժ հնազանդ եկեղեցւոյն Հոռոմայ եւ հրամանակատար եւ անդրուելի զղեակ միաբանութեան Տէր Չաքարիա ի աթոռոյն առաքելոյն Թաղէի վերատեսչի...» (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. Թ. 2184):

Չաքարիա շատ լաւ յարաբերութեան մէջ էր Կիլիկեան կաթողիկոսութեան հետ եւ համամիտ արեւմտեան Մայր Եկեղեցւոյ միութեան: Սոյն հարցի շուրջ գրաւոր պայքարի կը բռնուի Յովհաննէս Սիւնեաց եպիս-

⁹ 1294ին գրուած Աւետարանի մը յիշատակարաններէն մէկուն մէջ կայ՝ «Ես Փոխան տիկինս ետով զիմ աւետարանս ի սուրբ Թաղէոսի ժամատեղս, որ հասարակաց կարգան եւ այլ մարդ չկարէ հուրմ առնել» (Կալայեանց, Յուց. հայ. Ձեռ. Վասպ., էջ 117): Արդեօք այս խօսքերով Արտագու Ս. Թաղէոս հասկնալու է:

կողմից հետ (համառ. Չամչեան, Պատմ. Հայոց, Գ., էջ 304—308 եւ Տաշեան, Մայր ցուցակ, էջ 179) :

Չաքարիայի օրով աւերիչ երկրաշարժ մը¹⁰ կը քանդէ կը կործանէ նաեւ Ս. Թագէտի վանքը, սակայն արին եւ կորովին Չաքարիա ամէն տառապանք ու նեղութիւն յանձն առնելով վերստին զայն կը կանգնէ իրեն օգնական ունենալով «Տեղ եւ սրբասէր Տէր Տիրացու» :

Չաքարիա եւ Տիրացու եկեղեցւոյ վերանորոգութեան արձանագրութեան մէջ ի միասին կը յիշուին (համառ. վերը) : Անոնք կը յիշուին հետեւեալ երկու յիշատակագրութիւններու մէջ եւս. «Եւ արդ զրեցաւ սա (Աւետարան) ի թուականութեան 2280 (1330) յամենան Յուլիսի ի գաւառս որ կոչի Արտաղ ընդ հովանեաւ սուրբ Առաքելոյս Թագէտի եւ աստուածամուրի Գեղարդեանս ի թագաւորութեան Հայոց Լեւոնի եւ ի հայրապետութեան Տեանն Յակոբայ. յառաջնորդութեան այսմ նահանգի Տեանն Չաքարիայի եւ Տէր Տիրացու հեղի եւ սրբասիրի» (Ակիւնեան Հ. Ն., Հաւաքումն Յիշատակարանաց ի Յուցակէ Նոր-Չուզայի Տէր Աւետիսեանի. Աւետարանիս գրիչն է՝ Ռատակէս, ստացողը Մարգարէ եւ ծագողը Յովսէփ) : Երկրորդ յիշատակագրութիւնը հետեւեալն է՝

«Ի թիւ մարդեղութեան կենարարին մերոյ Փրկչին եւ Աստուծոյ ՌԳՃ եւ ԼԷ եւ ըստ հայկազեանս տումարի 222 (1337) յանկ էլեալ աւարտեցաւ աստուածային գիրք գատաստանի եւ Կանոնաց զերապատիւ եւ ապաքինիչ սուրբ եկեղեցւոյն Հոռմայ, որոյ ցանկացող եղեալ արիաջան եւ խրախամիտ կուսակրօն բարունին, որ կոչի Իսրայէլ որ է այր խոնարհամիտ եւ համեստութեամբ վարուց խորագիտութեամբ բարուց իրր զծեր եւ զհինաւուրց ժիր եւ արի ի պաշտօնն Աստուծոյ : Սա սնեալ եւ վարժեալ եղեւ առ ոտս ամենապարկեշտ ծերունոյն եւ մաքրամիտ

¹⁰ Սամուէլ Անեցին Հայոց 249 թուին կը գնէ զայն (Ժամանակագրութիւն, էջ 157, նոյնը կ'ընդունէ եւ Հ. Չամչեան, Պատմ. Հայոց, Գ., էջ 317. մինչ Չաքարիայի արձանագրութեան մէջ կարդացուած է 222 (համառ. առջեւ), իսկ յիշատակագրութեան մէջ 1321ին (համառ. Արեւիկ, 1895, Թ. 3500. ուր կայ յօդուածաշարք մը Արեւիկայ Ս. Թագէի կամ Մակարոսեցւոյ վանքի մասին) : Սամուէլի խօսքերն են՝ «ՌԳԻ ի 249 թվին եղեւ ահալին շարժ յարեւելս եւ զԹագէտս առաքելոյն վանքն եւ զեկեղեցւոյն կործանեաց եւ զտուննս փլայց եւ ՀԵ ոգի եսպան, զոր զարձեալ վերստին շինեաց զեկեղեցւոյն եւ զվանքն տէր Չաքարէ» (Ժամանակագրութիւն, էջ 157. համառ. էջ 165 «ՁԵ») :

բարունապետին որ մականունն Ծործորեցի... : Արդ եղեւ զԺագրութիւն սորա ի գաւառս Արտաղ ձեռամբ անարժան եւ մեղապարտ զըջի, որոյ անունն Մանուէլ ասի ընդ հովանեաւ սուրբ Առաքելոյն Թագէտի յառաջնորդութիւն արհիական զլիսոյն եւ սրբազան քահանայապետին տէր Չաքարիայի եւ յաջորդի նորին տէր Տիրացուի երջանկի հեղի եւ մարդասիրի լցեալը եւ պայծառացեալը ամենայն առաքինութեամբ զորոյ Տէր Աստուած անվերջով եւ անփորձ պահեսցէ զնոսա...» (Բէշիշեան, Յուց. Չամառի Թ. 258, անտիպ) :

Չաքարիա Ծործորեցի¹¹ երկար եւ արդիւնաշատ զործունէութենէ վերջ հանդարտ կրնար մշտապէս իր աչքերը փակել վստահ ըլլալով որ «մարդասէր» (համառ. վերը) Տիրացուն պիտի շարունակէր իր սկսած լաւ գործը : Սակայն ինծի զժբախտաբար անծանօթ կը մնայ Տիրացուի զործունէութիւնը :

Տիրացուի յաջորդներէն է Մեսրոպ վարդապետ, որ Ս. Թագէի մէջ լսարան կը բանայ եւ ապա կաթողիկոս կ'ըլլայ (համառ. Չարհանէլեան, Պատմ. հայ պարութեան, Բ., էջ 150. Չամչեան, Պատմ. Հայոց, Գ., էջ 355) : Իսկ 1383էն ունինք հետեւեալ յիշատակագրութիւնը, ուր կը յիշուին իմաստուն հոռոր բարունապետն Կարապետ եւ Սարգիս սպասաւոր բանին՝

«Փառք... Արդ զրեցաւ քարոզադիրքս այս ի մենաստանիս ի Մակու (Ս. Թագէտս) ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի, նաեւ առ ոտն կացեալ մեր իմաստուն հոռորի Կարապետ բարունապետի ձեռամբ նուաստ եւ տրուպ Սարգիս սպասաւոր բանի ի նեղ եւ ի դառն ժամանակի, զի սաստկացեալ էր մահ տարածամն ի թվականիս Հայոց ՊԼԲ (1383), այլ եւ զբաւեղեւ ի միւս ամն : Արդ... յիշես՝ ջր... զգծողս զՍարգիս վարդապետ, ոյ բազում եւ դառն աշխատանք զրեցի զսա... այլ եւ զծնողսն իմ զՅովանէս եւ զԵլիաթուն եւ զեղբարսն իմ զԹումաշահ եւ զՎարդա-

¹¹ Նա կ'օժանդակէ Ներսէս Վրդ. ի Աստուածաշունչի մը գրութեան եւ ստացումին համառ. Ակիւն, Հայապատում, Գ., էջ 161—165 եւ Սարգիսեան, Մայր ցուցակ, էջ 126—127) : Ծանօթ է՝ «Յիշատակագրութիւնը կաթողիկոսաց առաքելական փիճակիս Արտաղու» որուն վերջերք կը գրուի «եւ իրր գէտս Արտաղու գաւառին Չաքարիա գրեցաւ 2280» : համառ. Յաւելուած Սամ. Անեցւոյ, Ժամանակագրութեան, էջ 270—283 եւ Արարատ, 1868, էջ 102) : Այս գրութեան մասին կ'արժէ ծանրանալ երբ գրուի Արտաղի փիճակին կամ թեմին պատմութիւնը :

շահ... : Այլ եւ զՄաթէոս վարդապետ, որ զօրինակն անինայ կու շնորհէր...» (Ակիւնեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. Թ. 2259 [Քարոզադիրք Բարթողիմեայ]) :

Արդէն 1397ին Ս. Թագէի աթոռին վրայ բազմած կը դանկնը Պօղոս կաթողիկոս, որ քահանայ կը ձեռնադրէ Կիրակոս Վիրապեցին — էջմիածնի երբեմնի կաթողիկոսը (Թովմաս Մեծորեցի, Յիշատակարան, էջ 54) : Ինչ ինչ Ձեռագիրներ Արտաղու կաթողիկոսին անունը ոչ թէ Պօղոս այլ Պետրոս գրեւն (համառ. անդ, էջ 88 եւ Չամչեան, Պատմ., էջ 453) : Հաւանօրէն այն Պետրոս Պօղոսին յաջորդը կ'ըլլայ Միսիթարիչ¹² եւ անոր Գրիգոր Մակուեցին, որ կը մասնակցի Կիրակոս Վիրապեցւոյ կաթողիկոսական ընտրութեան եւ որ սակայն ետքն անկէ կաթողիկոսական գահը կը յափշտակէ (համառ. Թովմ. Մեծոր., Յիշատ., էջ 51, 78—82. Նօտարք, էջ 122. Դիւան, Ժ., էջ 46. Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 202. Չամչեան, Պատմ., Գ., էջ 490—491) : Բայց Գրիգոր ալ գահէն կը զրկուի Աղթամարի Չաքարիա կաթողիկոսէն, թէեւ նորէն կարճ ժամանակով մը նոյնին կը տիրանայ (համառ. Չամչեան, Պատմ. Հայոց, Գ., էջ 504 եւ 506) :

Գրիգորի առաջնորդութենէն վերջ Թագէի վանքը կրկին մթութեան քողով կը ծածկուի¹³, բայց բարեբաւասօրէն 1574էն ունինք հետեւեալ յիշատակարանը որ պայծառ լոյս կը սփռէ վանքին ներքինին ու արտաքինին վրայ : Միայն թէ լաւ կ'ըլլար եթէ հոն յիշուէր թէ՛ ինչ զժբախտ պարագաներու հետեւանքով ժամատունը բացուեր է եւ կը ծածկուի եւ ուրիշ նորոգումներ ու յաւելումներ տեղի կ'ունենան : Ահա Աւետարանի այն յիշատակարանը՝

«Յիշեցէք ի դուռն Ս. Թաթէոսի առաքելոյն զՏէր Չաքարայ կաթողիկոսն, Տէր Սրապիտն եպ. Տէր Մկրտիչ եպ. զպարոն Տէր Գրիգոր եպ. եւ այլ միաբան կրանաւորքն, Տէր Անդրեասն, վանից հայր Տէր Յոհաննէսն, Տէր Կարապետն, անտես Տէր Յակոբն, Տէր Թաթոսն, Յովանէս երէցն, զԹանանդ սար-

¹² Անոր օրով 1406ին կ'արտագրուի երգ երգոցի մեկնութիւն մը (Ակիւնեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Հ. Պոտորեանէ) :

¹³ 1486ին նահատակեալ Մերք Թարիգեցիի նշխարներու վերջին յարգանք մատուցանողներէն մին ալ է՝ «Վարդապետն Յակոբ ի սուրբ Թագէտի Առաքելոյ վանաց» (Հայոց Նոր Վիաներ, էջ 325) :

կաւազն (Գրիգոր սարկաւազն), սոքա եղեն պատճառն վանից շինութեան՝ ժամատունն ծածկեցին, ժամատեղն հաստատեցին եւ վանից դուռն զարդարեցին եւ շէն կու պահեն եւ շատ չարչարանք քաշեցին յանաւրինաց... Աստուած ողորմի ըսէս Դաղարի հոգոյն, որ վանս սուրբ Թաթէոսի առաքելոյ սիրոյն համար նահատակեցաւ... : Յիշեցէք զնորընծայ Տէր Թաթէոս կաթողիկոսն որ... վերստին հաստատեաց ժամակարգութիւն... կրկին նորոգել եւ կազմել ետուն զաւետարանն... : Յիշեցէք մալիք Չարուին եւ զերկրի ժողովուրդքն եւ զտանուէրքն Մակուայ որ յանձն առին վանից պակասութիւն՝ մալին, խարջին, պարտքին աւանականութիւն անին եւ զմեղոր Յոհանէս երէցն կազմողս յիշեցէք... թվ. ՌԻԳ 1574» (Թօփճեան, Յուց. հայ. Չեռ. Դաղեան Վրդ. ի, Բ., էջ 13) : 1615ին կը յիշուի Բարսեղ կաթողիկոս (Յուց. Դաղեան Վ. ի, Բ., էջ 32) :

Ասկէ վերջ վանքիս մասին թէեւ լուրջութիւն ունինք, սակայն յինքեան աղմուկն ու տատանումը կը դանկնը անոր շուրջը եւ անքար ու քանդ ըլլալով Մկրտիչ կաթողիկոսը փլիպպոս կաթողիկոսի օրով զայն կը վերաշինէ. ինչպէս Առաքել Դաւրիթեցի կը նկարագրէ՝ «Յաւուրս փլիպպոսի կաթողիկոսի շինեցաւ վերստին եւ վանքն սուրբ առաքելոյն Թաթէոսի որ յԱրտաղ գաւառին ի դիւզն Մակու, զի միանգամայն ամենայն շինուածքն աւերեալը էին եւ ի սոյն ժամանակի կաթողիկոսս ոմն Մկրտիչ անուն իւրովքն միաբանօքն, արեղայիւք եւ սարկաւազօք... վասնեան ամենեքեան սիրով սրբոյ Առաքելոյն Թաթէոսի... ձեռն ի դործ արկին եւ սկիզբն արարին շինութեան վանացն եւ նախ պատճարն սկսան շինել, որոյ արեւելեան եւ հիւսիսային կողման որմոցն մինչեւ ցկէսն միայն շէն էր մնացեալ եւ այլ ոչինչ բնաւ եւ սոքա զամենայն միանգամայն մինչեւ ցղլուխ կաթողիկէին շինեցին, ներքուստ եւ արտաքուստ սրբատաշ վիմօք, ամուր եւ զեղեցիկ եւ եղեւ կատարումն զործոց տաճարին ՌՂԹ թուին (1650) : Յետ կատարման սաճարին, սկսան զժամատունն շինել խրատեալ քարամբք եւ մածուցեալ հրով եւ սորին կատարումն եղեւ ի ՌՃԲ թուին : Չկին սորին շինեցին զվկայարան սրբուհւոյ կուսին Սանդխոյ : Ապա զՆահատակ անուանեալ եկեղեցին, որ է տեղի նահատակութեան սրբոյ առաքելոյն Թաթէոսի եւ կատարեալ

զամենայն շինուածս զայնոսիկ... նոյն եպիսկոպոսն Մկրտիչ եւ միաբանքն իւր կան անդէն եւ պաշտեն զԱստուած» (Առ. Դաւրիթ. Պատմ., էջ 349—350). Հմմտ. Շահաթունեան, Ստորագրութիւն, Բ., էջ 351—352):

Մկրտիչ եպիսկոպոսի ընտիր գործունէութիւնը ծանօթ է նաեւ ուրիշ գրութեանէ մը, ուր նախ եւ յառաջ Ս. Թադէոս առաքելի վանքի վերջին շրջանի առաջնորդներու անունները յառաջ բերուած են: Այդ գրութիւնը վանքի առաջնորդներու պատմութեան համար յոյժ շահեկան է եւ է հետեւեալը՝

«Առաքելոյն Թադէոսի եպիսկոպոսունք ի վերջին ժամանակի՝ Բեստացի Զաքարիա եպիսկոպոս, որ եղեւ կաթողիկոս եւ ասաց բազում ճառս եւ վախճանեցաւ ի Ստամպոլ: Զկնի Զաքարիային Յոհաննէս եպիսկոպոս եւ յետ նորա Յակոբ վարդապետ, Պետրոս վարդապետ, Ներսէս եպո., Սրապիոն եպո., Գրիգոր եպո., Վրդանէս եպո., Պետրոս եպո. Քօսեցի, Դանիէլ վրդ., Մկրտիչ եպո. փոքր. Սրապիոն եպո., Թադէոս եպո., Միռն Թադէոս եպո. Արայիշէնց, Բարսեղ եպո. Բիսենց, Մկրտիչ եպո., որ նորոգեաց զեկեղեցի սուրբ Առաքելոյն Թադէոսի ի հիմանէ եւ շինեաց զգարպասն եւ զմատուռն ի տեղի նահատակութեան Առաքելոյն եւ սրբուհւոյն Սանդիստոյ Կուսին, որոյ ձեռնուտ եւ գործակալք էին տէր Դանիէլ եւ տէր Պետրոս բազում աշխատութեամբ ի թվականին Հայոց ՌՃ հրամանաւ երիցս երանեալ եւ ճգնագրեաց Փիլիպպոս կաթողիկոսին» (Ակիւնեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. 340, թղ. 123ա—բ եւ Շահաթունեան, Ստորագրութիւն, Բ., էջ 351):

Մկրտիչ եպիսկոպոս կ'երեւայ թէ՛ շինարար գործունէութենէ յետոյ կը հրաժարի եւ Յակոբ կաթողիկոս անոր յաջորդ կը նշանակէ Իսահակ Մակուեցին¹⁴: Վերջինս յիշատակարանի մը մէջ կ'ըսէ «յաջորդեցաք զտեղի փառազարդ ծերունւոյն Մկրտչի եպիսկոպոսի» եւ ոչ թէ «յետմահուն Մկրտչի եպիսկոպոսի»: Սոյն յիշատակարանին մէջ Իսահակ իր համառօտ կենսագրականը կ'ընէ

¹⁴ 1669ին Իսահակ արդէն իբրեւ՝ «Վերատեսուչ սրբոյ Առաքելոյն Թադէոսի» կը յիշատակուի (Ակիւնեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Գեղամ Տէր Յարութիւնեանէ): Ինքը արդէն կ'ըսէ 1677ին զբուռ յիշատակարանի մը մէջ թէ՛ 13 տարի առաջնորդութիւն ընելէ յետոյ օգնական կը ստանայ Սարգիս վարդապետը:

եւ կը հաղորդէ թէ ինչ նորոգութիւններ ըրած է Ս. Թադէի մէջ՝

«Արդ ես տրուպս յամենայնի եւ վերջինս ի բանասիրաց Իսահակ վարդապետս Մակուեցի, որդի Սահակ քահանայի որդւոյ Մէրանի, որդւոյ Քիչիմիլի, որդւոյ Արայիշի, որդւոյ Յոհանիսի, որդւոյ Թադէոսի, որ յԱկանց կոչեցելոյ զեղջէ ի յԱրճիւոյ եւ յԱղիովոյ եկեալ աշակերտ մեծափառ սրբական հայրապետին Տեանն Յակոբայ կաթողիկոսի ամենայն Հայոց յաթոնն զերագահ սուրբ Էջմիածնի սնեալ եւ վարժեալ առ ոտս նորա ի նոյն յոգնահանդէս աթոնն ի նմանէ ձեռնադրեալ եւ առեալ զամենայն աստիճանս եկեղեցականս, եթէ վարդապետական իշխանութիւն եւ զաւազան, եթէ եպիսկոպոսական առաջնորդութիւն սուրբ աթոնոյս Թադէոսի առաքելոյն¹⁵: Որոյ հրամանաւ եկեալ ի սուրբ աթոնս յաջորդեցաք զտեղի փառազարդ ծերունւոյն Մկրտիչ եպիսկոպոսի, որ վերստին նորոգեաց զեկեղեցի սուրբ առաքելոյն, որ քակեալ էր յերկուց կողմանց ի հիմանց: Այլ եւ զգարպասն եւ զտեղի նահատակութեան սուրբ Առաքելոյն եւ զսուրբ Սանդուխտն հանդերձ գործակցութեամբ քաջամարտիկ տէր Դանիէլին եւ Բէստենց տէր Պետրոսին, որոց Տէր վարձահատոյց լիցի: Իսկ ես ապիկարս Իսահակ վարդապետ ի զալս իմ սկսայ շինել զպարիսպն եւ զխցերս եւ վասն նեղութեան տեղոյս եւ վշտաց առաւելութեան օգնական խնդրեցի ի հողեւոր տեառնէն մերմէ Յակոբայ կաթողիկոսէն զձեռասուն աշակերտ մեր զՍարգիս վարդապետն Կաֆայեցի, յետ ԺԳ. ամի առաջնորդութեան մերոյ եւ ի թվականին մերում ՌՃԻԶ երրորդի¹⁶ եղեւ զիւտ ջրմղին որ ասի Կանոնուտի, զոր յառաջ ժամանակաւ բերեալ էր մեծն Զաքարիա եպիսկոպոսն պարոն Մանուէլի որդի, երկրորդ անգամ ի հիմանէ շինող սուրբ եկեղեցւոյս եւ էր քակտեալ եւ աւերեալ եւ հաղիւ ուրեք նշմարանքն մնալէ: Այլ այժմ Հնորձօք Աստուծոյ կրկին նորոգեցաւ եւ յորդարուիս աղբիւրն բերեալ ածաւ ի մէջ վանիցս եւ զեղջս հոգարարձութեամբ Սարգիս վարդապետի Կաֆայեցւոյ:

¹⁵ Նաեւ անկէ կարգուած աթոնակալ եւ տեղապահ «Էջմիածնի» (Զաքարիա Սարկաւազ. Պատմգր., Բ., էջ 72):

¹⁶ Ժիզ այս թուականին գրուած Յովհաննու Աւետարանի մեկնութեան մը մէջ կայ՝ «Ըստ հրամանի տէր Զաքարիայի եւ սպասաւորի առաքելոյն Թադէոսի թվին ՌՃԻԶ» (Թօփճեան, Յուց. Հայ. Զեռ. Դաղ. Վրդ. Բ., Բ., էջ 54):

Վասն որոյ հայցեմ յեկեղոց եղբարց որք միանգամ վայելէք յաղբերէ անտի, յիշեալէք ի պաղապանձ աղօթս ձեր զաշխատօղս եւ զերախտաւորս ջրբխս: Եւ խնդրեմ զի ամ յամէ խնամատար լիջիք եւ հոգ տարջիք, զի մի ի սպառ մլասեսցի եւ խանգարեսցի: Քանզի յառաջին շինուածոյն մինչեւ ի մեղ իբրեւ ԳՃԾ ամ անցեալ էր եւ մեք նորոգեցաք. դուք եւս մասնակից լիջիք բարեգործութեան վասն հասարակաց եւ սուրբ աթոնոյս օգտին: Այլ եւ զիբքս այս Հարցմանց, զոր ընծայեցի սուրբ Աթոնոյս Առաքելոյն Թադէոսի, որ էր ստացուած իմ, Ետու յիշատակ մնալ ի դրան նորա յաւիտեան, մի ոք արտահանցէ ծախելով կամ գրաւ դնելով, զի այնպիսիքն ըստ սեղանակապտին Գէէլի են պատժելոց: Իսկ այնք որք ի հինահարութենէ զերեալ լինի վերստին դնեսցէ, այնպիսիքն ի զերազարձէն Քրիստոսի կն պսակելոց եւ վարձս ընդունելոց...: Գրեցաւ ի թիւ Կենարարին ՌՈՂԵ եւ ըստ հայկեանս ՌՃԻԶ յամսեան Սեպտեմբերի ի երրորդի, ի թագաւորութեան Պարսից Շահ Սուլէյմանի եւ ի կողմն Հոռոմոց Սուլթան Մահմատին, որ էստ զկիրեան կղզի եւ զԼէհաց զամուրն Կամենէից: Եւ ի հայրապետութեան Տեանն Յակոբայ կաթողիկոսի ամենայն Հայոց յաթոնն Էջմիածնի: Որ բազում հակառակութիւն կրեաց յապստամբաց սուրբ Էջմիածնի» (Ակիւնեան Հ. Ն., Հաւաք. Յիշատակ. էջմ. 808):

Իսահակ Յակոբ կաթ. ի հրամանով Էջմիածնի համար հանդանակութեան կ'ելլէ Բաղէշ եւ Ներսէս վարդ. ի դժբախտ մահուան առիթով Ս. Թադէի համար Աստուածաշունչ մը կը ստանայ՝

«Ի թվականին մերում ՌՃԻԶ երրորդի (1677) ամի ես Իսահակ վարդապետս Մակուեցի, աշակերտ Տեանն Յակոբայ կաթողիկոսի, որոյ հրամանաւ զնացի ի Բաղէշ քաղաք վասն նուիրակութեան Ս. Էջմիածնի: Յայնմ ժամանակի Ներսէս վարդապետ ոմն Հգուեցի, աշակերտ հեղահոգի Մեսրոպ վարդապետի Բաղիշեցւոյ զետամոյն եղեալ վաղձանեցաւ: Իսկ եղբայր նորա բարեպաշտօն մահգասի Յովհաննէսն եւ Մեսրոպ վարդապետն ընծայեցին զսուրբ Աստուածաշունչս ի ձեռն մեր ի դուռն սուրբ Առաքելոյն Թադէոսի աթոնոյն մնալ անդ յիշատակ յաւիտեան» (Ակիւնեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. 187, 453 բ):

Իսահակ, որ կոչուած է Իսահակ Արզար, Տէր Վարդան Յունանեանի առջեւ 1682ին կաթողիկէ հաւատոյ դաւանութիւնը կու տայ եւ իր դաւանադիրը կը դրկէ Ինովկիւնտիոս ԺԱ. Քահանայապետին (Հմմտ. Տաշեան, Մայր ցուցակ, էջ 113): Իսահակի¹⁷ առաջնորդութեան շրջանակը շափազանց ընդարձակ էր եւ նմանապէս գործերը շատ էին, այս պատճառով իրեն օգնական կ'առնու իր աշակերտը Սարգիս Կաֆայեցի¹⁸ որ շափազանց մեծ օգնութիւն կը մատուցանէ շինքին ու պարիսպներու վերաշինութեան գործին մէջ: Հոս կը կցեմ հետեւեալ երկու յիշատակարաններն ալ, որոնք անոնց գործունէութիւնը կը նկարագրեն:

«Արդ ի վերջ ժամանակիս որ էր թվականն Հայոց ՌՃԼԳ (1684)¹⁹ եւ ի թագաւորութեան Պարսից Շահ Սուլէյմանին եւ ի հայրապետութեան Տեանն Նղիազարու յաթոն սրբոյ Էջմիածնայ եւ առաջնորդութեան քաղաքիս Թարվիղու եւ բոլոր երկրին քաղաքաց եւ զիւղօրէիցն ամենեցուն Իսահակ վարդապետին Մակուեցւոյ, յորում այս թվականիս նորոգեաց ի հիմանց զտաճար սուրբ աթոնոյն առաքելոյն Թադէոսի, որ էր քակտեալ եւ խայխայեալ վերակացութեամբ եւ աշխատութեամբ նորին աշակերտի Սարգիս վարդապետին Կաֆայեցու ետ վերստին կազմել եւ նորոգել զաստուածաբուխ սուրբ մատեանս որ կոչի ձաշոց: Արդ... յիշեցէք... զվերջին կազմող եւ նորոգող եւ պատճառեղօղ սորին, այլ եւ զԻսահակ եւ Սարգիս վարդապետսն, որ բազում աշխատութեամբ Ե. ամ հաղիւ աւարտ հասուցին զնորոգութիւն տաճարի զամբարանի սուրբ առաքելոյն Թադէոսի...:

Դարձեալ յիշեցէք քահանայքն՝ զտէր Ղազարն, տէր Փիլիպպոսն, տէր Սաչիկն, տէր Մաթէոսն, տէր Ահարոնն, տէր Յովաննէսն, տէր Յակոբն, տէր Մանուէլն, մահտեսի երեսփոխան Միխան պատճառ եղեն եւ ետուն նարոգել...» (Քօսեան Հ. Յ., Յուց. Հայ.

¹⁷ Իսահակ «այր Ծերունի եւ յոյժ առաքինի... կ'երթայ վան եւ ապա կրկին Ս. Թադէոս կը դառնայ» Դեան, Ժ., էջ 118):

¹⁸ Սոյն Սարգիս մտին բաւական շատ տեղեկութիւններ կան Էջմիածնի Թ. 1304 Զեռագրին մէջ: Հմմտ. զեւ վերի յիշատակարանը:

¹⁹ 1684 թուականին Թադէի առաջնորդ (այս է՝ Արտազու) կը յիշուի Պետրոս (Արարատ, 1888, էջ 484): — Իսկ 1697ին Դաւիթ (Հմմտ. Karamianz, Handschriftenverzeichnisse der Königl. Bibliothek zu Berlin, Berlin 1883, էջ 13):

Չեռ. Կարնոյ գիւղերու Թ. 9, ձաւոյ [անտիպ] :

Երկրորդ յիշատակարանն է՝

«... Եղեւ ստացումն բուրաստանին (աւետարանին) (յ) առաջնորդութեան Թարգիւղու եւ բարձր շրջակայ գեղորէից արքեպիսկոպոսի սրբոյ աթոռոյ Առաքելոյն Թաղէոսի Տեառն Իսահակայ աստուածարան վարդապետի, որ մահանուամբ Արդար վերածայնի: Եւ աշակերտի նորին Սարգիս վարդապետի Կաֆայեցոյ, որ է տեսուչ սրբոյ Աթոռոյ Առաքելոյն Թաղէոսի, որ է հիմանէ նորոգեաց զեկեղեցին եւ զպարխապն...: Ի թվ. Հայոց ՌձԽ (1691) յամեանն Մայիսի Ի» (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. 247):

Սարգիս մասին Ստ. Լեհացիի Դիոն. Արխապագայի գործին թարգմանութեան յիշատակարանին մէջ յատուկէն կ'ըսուի՝ «Արդ ստացող եղև նոր թարգմանեալ գրոցս Սարգիս վարդապետն Կաֆայեցի, որ էր առաջնորդ մեծ աթոռոյս Թաղէոսի սուրբ Առաքելոյն, որ նորոգեաց զեկեղեցին և հիմանէ եւ զպարխապն ընդարձակեաց հաստահեղուս որձաքարամբք, բրդօք եւ դարպասօք եւ խցերօք եւ հիւրանոցօք եւ տնտեսանօք եւ այլ հարկաւոր շինուածովք: Այլ եւ զմուկքն վանիցս, զոր սյրազդիքն տիրեալ էին յետ զնեաց եւ վախճաւ սուրբ աթոռոյս... յարհիպիսկոպոսութեան նահանգիս Իսահակ վարդապետի Մակուեցոյ... և թվականին մերում ՌձԻԵ ամին» (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. Թ. 109):

Իսահակի եւ Սարգիսի առաջնորդութեան օրերուն Ս. Թաղէի վանքը հողեր ու նուէրներ կը ստանայ: «Յիսուսի Քրիստոսի ծառայ Իսահակ վարդապետ թվ. ՌձԵ (1656) Ես Իսահակ Վ. Գուլամբի կամօքն մօհրեցի: Առաջի Աստուծոյ եւ Վարդանայեկերացի Եսգուբի որդի Սոնդամիրս վախճաւ սուրբ սուրբ Առաքելոյն Թաթէոսի Ծահառուի մօտ Կեռ հողն... ևս Վարդանայեկերացի Գուլամբիս հողեւորդի Սոնդամիրին վերատին հաստատեցի թվ. ՌձԻԳ (1674)» (Թօփճեան, Յուց. հայ. Չեռ. Դաղ Վրդ. Ի, Բ., էջ 13): — Առաջի Աստուծոյ եւ առաջի Մակուայ տօլվաթաւորացն եւ Մուստաֆարի տղայ Դամուրս իմ կամով իմ փայ մուկքն առաքելաց եւ զերարէքին ծախեցի առաքելոյն Թաղէոսի ձեռամբ Մահակ վարդապետին նորին առաջնորդին... Գինն երեք Թուման Գրեցաւ և

Թվին ՌձԹ (1660) և նոյեմբերի ԺՁ. Տէր Աւետիս վկայ եմ» (Անդ, էջ 13): — «Այս է վախճաւ եւ մուկք սուրբ առաքելոյն թէ այդեանի թէ վարդայեցի ի Մակու... ևս Սարգիս վարդապետ Քահայեցի և սպասաւոր սուրբ Առաքելոյն իմով ձեռօք թվին ՌձԻԸ (1679) Սեպտեմբերի գրեցի եւ կնքեցի» (Անդ, էջ 13): — «Մուկքսի դուստր Նազու... և մէջ սուրբ Վարդանայ իմ հօր Մուկքսի բաժին մուկքն... վախճաւ արի սուրբ առաքելոյն» (Սարգիս վարդապետի կնքով կնքեալ 1684ին) (Անդ, էջ 13): — «Ես Մակուեցի Այտիլենց աղբէն Ասլանենց Մկրտչի թոռն եւ Պապուամի որդի Կիրակոսս... յօժար կամօքս վախճաւ արարի Ղութուճանի փայն եւ Նուշկայ դէմի զլղլոս այգին, մուկքն եւ ազարակն որ վանքին վախճաւ լինի եւ ուտեն մասուլն եւ ինձ եւ իմ ծնօղացն ողորմի տան... սինօնն եւ հատուհուտն այս է... գրեցաւ ՌձԽԳ (1694) Ապրիլի ԻԵ»: Սոյն նուիրադրին կամ վաւերագրին վերեւ կայ կնք եւ կողքին՝ «Ես Իսահակ վարդապետս առաջնորդ սուրբ Առաքելոյն Այտիլենց Կիրակոսի վկայութեամբ մօհրեցի»: սպա ձուածեւ եւ ութանկիւնի կնքներ Սարգիս, Մատթէոս Չուղայեցի, Խոյեցի Պետրոս վարդապետներու (Անդ, էջ 14): — «Մեր Վարդանայեկերացի տօլվաթաւորքս, Սարգարս որդի Աղաջանի, Կուլամբիս... Ղազարս, Գրիգորս... Թարխանս... միաբանք որ յառաջ տված էր վանից կրկին հաստատեցինք թվին ՌձԾԳ (1704)»: Կնքք՝ Յիսուսի Քրիստոսի ծառայ Սարգիս վարդապետ, որ տակը կը գրէ՝ «Ես Սարգիս վարդապետս առաջնորդ սուրբ Առաքելոյն Թաղէոսի յօժարութեամբ վերջըրեալ տօլվաթաւորացն գրեցի եւ մօհրեցի»: Ապա կը յաջորդեն ստորագրութիւնները Աստուածատուր վարդապետի, աէր Ներսէսի, Խօյի Ստեփանոս վարդապետի, Ռէս Մուրախանի եւ Պետրոս Վրդ. Խոյեցիի» (Անդ, էջ 14): — «Մելիք Պնիկի դատերքս էթարս, Խաթունս մեր հօրէն մնացած Մակուայ այգիքն յօժարութեամբ տվաք վախճաւ և դուռն Թաղէոս առաքելոյն եւ մեր Սարգարս որդի էթարին եւ Յովսէփս որդի Խաթունին վերատին մեր մարց կտակն եւ վախճաւ հաստատեցաք... թվին ՌձԾԳ (1704) Հոկտեմբեր Ժ. վերջըրեալ վարդապետների եւ սյրոց կնքով եւ ստորագրութեամբ առաջի Անձկու տօլվաթաւորացն» (Անդ, էջ 14):

Յաջորդ տարիներուն Ս. Թաղէի վանքը

դեռ ուրիշ շատ մը զոյքեր ու նուէրներ եւս կը ստանայ: Չանոնք վաւերագրերու համեմատ համառօտիւ յառաջ բերած է Թօփճեան, Դաղեան վարդապետի հայ. Չեռագիրներու ցուցակին Բ. հատորին մէջ հմմտ. (էջ 14—16)²⁰: Հոն յառաջ բերուած են նաեւ կարեւոր բովանդակութիւնները Ս. Թաղէի առաջնորդներէն ոմանց կոնդակներուն: Այդ տեղ էջ 16, Թ. 22, կը յիշուի մեր հարցին շուրջը կարեւոր գրութիւն մը «Թ. 22. պատմական դէպքերի ժամանակագրութիւն է, Բձ.ից սկսած մեծ մասամբ Թաղէոս առաքելոյ վանքին վերաբերեալ: 16 թ. հին նոտրդիր»: Կ'արժէր սոյն գործին հրատարակութիւնը ընել կամ զոնէ կարեւոր դէպքերու յիշատակութիւնը: Դաղեանի ձեռագիրներու հաւաքածոն Ս. Թաղէի պատմութեան համար մեծարժէք է:

Դառնալով մեր պատմութեան, ինչպէս նուիրատուութիւններէն կը տեսնուի դեռ մինչեւ 1704 Ս. Թաղէի առաջնորդ է Սարգիս Կաֆայեցի: Անկէ վերջ 1728ին կը յիշատակուի Քաւեցի Յովհաննէս վարդապետը, որուն Առաքել որդի Սիմոնի Թաւրիղեցոյ կը

²⁰ 1758ին Սելուս իր այգին «Վախուց» կ'ընէ Ս. Թաղէոսի (Անդ, էջ 14): 1738ին ԺԵ. Թուման Վախուց կ'ըլլուի Ս. Թաղէոսի: Անդ, էջ 14 (Թիւ 11): 1739ին Սանդուխտ Նախալկայ վանուց նուիրատուութիւն կ'ընէ (Անդ, էջ 14): 1749ին Ս. Թաղէի կը արուի՝ «յառաջնորդ Միսաս վարդապետին 10 Թուման, որոյ կէսն է Ե. Թումանս» (Անդ, էջ 14):

Սելուս «Վախուց» կ'ընէ իւր այգին Ս. Թաղէի (Անդ, էջ 15):

Սաֆար 1772ին իր հարեանական տան կամի տեղն կը նուիրէ Ս. Թաղէի (Անդ, էջ 15):

«Թվին ՌՄԻԸ (1779) Մարտի Դ. ունն եւ Կօհրօփանց ձահանի որդի Պատուօ... կըքին վախճաւ արի սուրբ առաքելուն (այգին) եւ այս եղև և յառաջնորդութեան զերայհոջակ սուրբ Առաքելուն Թաթէոսի Տեառն Եսայիաս աստուածարան մարդակենցաղ վարդապետին եւ նորին սուրբ վանից բազմաշատ միաբան Գէորդ գերբզօն վարդապետին...» (Անդ, էջ 15):

«Ի ՌՄԼԴ (1785) թվոջ... Ղափանցի Օհաննէս եւ իր կինը Թաղէոսի իրենց «տնին հանդերձ պաղչայով» վախճաւ կ'ընեն Ս. Թաղէոսի... «Ի ժամանակին որ էր տեսուչ եւ առաջնորդ Մահակ աստուածարան վարդապետը» (Անդ, էջ 15):

1797ին Մարգար իր «յօրբաժին մուկքը» կը ծախէ Ս. Թաղէոսի առաջնորդին (Անդ, էջ 15):

ՌՄԾԵ թուին Սիմէոն Վրդ.ի առաջնորդութեան օրով Նազար «Բ հատ տեղ եւս» իր այլ նուիրատուութեանց վրայ կ'ընէ Ս. Թաղէի (Անդ, էջ 15):

ՌՄԾԸ թուին իր տները կը ծախէ Ս. Թաղէի... «Ի առաջնորդութեան Տեառն Սիմէոն վարդապետին» (Անդ, էջ 15):

Մահանի Յարութիւն եւ իր կողակիցն Աննա ՌՄԶԻ թուին «Ի ժամանակ Տեառն Բարսեղ արքեպիսկոպոսին եւ առաջնորդի» իրենց հինգ «կտոր տունն եւ առաջի եղեալ խանն» Ս. Թաղէի «Վախուց եւ կտակ» կ'ընեն (Անդ, էջ 15):

Վարդուս իր «հարեանական միքերն» կը յանձնէ «Ի դուռն Թաթէոսի առաքելոյն և ձեռն Մահակ վարդապետին» (Անդ, էջ 16):

գրէ՝ «Չ. սալիջան տուի» (Քօսեան, Յուց. հայ. Չեռ. Կարնոյ գիւղերու Թ. 9 ձաւոց):

Ապա 1749ին²¹ արդէն վանահայր է Միսաս վարդապետ²² (արքեպիսկոպոս), որ Աղեքսանդր Կաթողիկոսի կոնդակով՝ ՌՄԲ (1753) թուին կը լիադորուի Ս. Կարապետի վանքը վերանորոգելու եւ միաբաններու ապրուստը հայթայթելու — նուիրահաւաքումով (Թօփճեան, Յուց. հայ. Չեռ. Դաղեան Վրդ., էջ 3): Իսկ 1765ին վանքին առաջնորդ է իրրեւ Չաքարիա Ղափանցիի յաջորդ (հմմտ. վերը) Եսայի(ա) վարդապետը²³, որուն օրով Սիմէոն Կաթողիկոսի հրամանով Ս. Թաղէի Պետրոս վարդապետը նուիրահաւաքումի կ'ըլլէ, սակայն հաւաքածները կը վառնէ եւ նոյն իսկ կը համարձակի Ս. Թաղէոսի աջէն բեկանել ու դայն ծախել (Դիւան, Ը., էջ 292—293): Սոյն Սիմէոն թղթով մը Աղբակցիներու եւ Սալմաստցիներու կը զեկուցանէ թէ իրենց «առաջնորդացու» Ստեփանոսի հրահանգ տուել է «երթալ առ Թաղէոսի առաքելոյ առաջնորդն եւ վեղար առնուլ և նմանէ եւ լինել վէքի վանիցն» (Անդ, էջ 607):

Սիմէոնի²⁴ յաջորդը՝ Ղուկաս Կաթողիկոս 1781 թուին կը գրէ թուղթ «առ միաբանս եւ ժողովուրդս վիճակաց սրբոյ վանից Թաղէոսի» եւ վանքին վէքի կը զնէ Պետրոս վարդապետը, յետոյ՝ զինքը անոնց կամեցողութեամբը առաջնորդութեան հասցնելու պատրաստակամութեամբ (Դիւան, Դ., էջ 216): Բայց յաջորդ տարին անոնց կ'առաջարկուի Ստեփանոս Չուղայեցիին առաջնորդ ունենալ, սակայն անոնք Կարսի առաջնորդը իրենց հովիւ կ'ուզեն, բայց անլսելի կ'ըլլան (Անդ, էջ 401): Ետքէն առաջնորդ կը կարգուի Իսահակ Փառակեցիին, որ սակայն «ոչ լատ առաջնոց առաջնորդացն պարկեշտօրէն վարեցաւ, այլ ճոխարար նորաձեւութեամբ երաց զինքն եւ զվանքն յաչս բռնաւորաց տեղեացն» եւ հետեւանքն այն կ'ըլլայ որ՝ ժողովրդեան դժգոհութեան վրայ Ղուկաս Կաթողիկոս զինքը ետ կը կանչէ (Անդ, էջ 538—

²¹ Փարսապան բէկ Թաղէի վանքի միաբան կ'ըլլայ (Թաթէի, Դաթիթ բէկ, էջ 783—784):

²² Հմմտ. Թօփճեան, Յուց. հայ. Չեռ. Դաղ. Վրդ., Բ., էջ 14:

²³ Եսայիաս կը գրուատուի իրրեւ «աստուածարան եւ մարդակենցաղ», ինչպէս իրեն միաբանակից Գէորդ վարդապետը իրրեւ «գերբզօն եւ բազմաշխատ» (անդ, էջ 15 եւ Դիւան, Գ., էջ 331 եւ վերը):

²⁴ Սիմէոն Եսայիին վանքին համար Տօնացոյց մը կը գրէ, Դիւան, Ը., էջ 472:

540, 542) : Սոյն Սահակ իր մասին կը գրէ՝ «Թշուառ հողի մեղապարտ տէր Իսահակ անարժան եպիսկոպոս ՌՄԼԲ (1783) թուին կարգեցայ սրբազան Առաքելոյն Թաղէոսի դերաճորճ սքանչելագործ սուրբ աթոռոյս յառաջնորդ, քանդի ժամանակն յոյժ դառն եւ դժնդակ էր եւ ոչ դոյր թագաւոր Պարսից եւ բազումք էին կեղեքողք սրբոյ վանքիս եւ ես տառապեալս եւ անընտել դարիս միայն առնէի միտթարութիւն ինձ սուրբ Աստուածաշունչ գիրքս» (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. 187) : Իսահակ կը գրէ թուղթ մը առ Ստեփանոս վարդապետ «Թուղթ առ Ստեփանոս վարդապետ, քրիստոսաւանդ ողջունին սիրով. ծանիր հոգեւոր եւ վսեմամիտ եղբայր Ստեփանոս ճշմարտախոճ վարդապետ... : Գրեցաւ ի թուականիս մերում ՌՄԼԲ ամին յամսեանն Հոռի ի Ժ. երրորդի ձեռամբ փծուն Իսահակ վարդապետի ի դրան սուրբ Առաքելոյն Թաղէոսի (կը գտնուի էջմիածնի թ. 462 Ձեռագրի մէջ թղ. 43—44) : Իսահակ ²⁵ 1785ին Ղափանցի Օվանէսի տները

²⁵ Իսահակ Արղարին ու Իսահակ Փառակեցիին եւ ուրիշ առաջնորդներու եւ Ս. Թաղէի վանքին մասին հետեւեալ յիշատակարաններն իրենց կարեւոր բովանդակութեան համար կը գնեմ՝ «Տէր Իսահակ յառաջնորդ շինարար վարդապետան հնոց ժամանակաբանակեցեալքն ի դիւզն ժամտարարաց մարդիքն դուրս հարածեաց անոյն եւ նոյնիւք փակեաց եւ բազմակնքով կանոնադրեաց զի մի մտցեն ի դիւզն սրբոց վանքին եւ ի թուղթութեան յառաջնորդաց չարոց ոմանք աստի անտի փախուցեալ մարդիք, քանդի տեղէ կանոնադրին Տէր Իսահակ շինարար յառաջնորդ վարդապետին եւ ինքն զգուշ լինելի վասն որոյ ի սրբանէ յառաջ գէտն եւ միարանից շատն դիւզէն էր եղեալ եւ որքան լաւ տեղ եւ արտօրեաք սրբոց վանքին զայն եկամտուն ոչինչ աշխարհականքն էին տիրապետեալք այնու կողմանէ աղաղակին ազեակքն թէ մեր է ի նախնեաց մերոց մեզ մուք մնացեալ է եւ այնու վշտացեալ ողորմելի առուստ հնձոց մինչեւ թ (ու) ման խարձեաց եւ նոցա վարդապետն ասու եւ անով դուրս արու գնացին Մահու Մանուշարն, որ Պոյսց էր եկայ նախին, Ընէս, Մարգի որդիքն իրապետեաց հուրին (?) Սարմատուն ինչ եւ ինչ շատ փաստակար էին մերժեցան Աստուածով ՌՄԼԲ թուոյն Յուլիսի ԺԸին : Յուժ չարաբար թշնամի Բ որ դիւզացիք սրբոց վանքիս Թաղէոսի առաքելոյն այլ առաւել չարագոյն չիք նոյնեալ որդի Մանուշարն եւ անիծեալ Նեոան որդի Մկրտիչն միշտ չարութեամբ ի ժամանակի Եսայեայ վարդապետին իրբեւ զղացան կերեալ էին եւ պէտպէս փորձանէ յարուցեալ ի վերայ սրբոց վանքին ձեռամբ Մակունայ Սուլթանին եւ երբ եկն Փառակեցի Տէրն Իսահակ շինարար վարդապետան յառաջնորդ սրբան կարաց կարկեաց զերանս չարեաց եւ այնու պատճառաւ շատ ձանձրութիւն կրեաց ի չարեաց Ս. տարուան խանդարեալ բարին կամէր ի լոյս անել ողորմելին ՌՄԼԲին» (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատակ., Երեւան 971, էջ 187—188. Ժողովածու) :

«Մկրտիչ եպիսկոպոսի ժամանակն է շինեալ եւ Փիլիպպոս կաթողիկոսի սուրբ Թաղէոսի առաքելոյ տաճարն թիֆլիս ՌՂԹ. Ե. դարբանն ՌձԲ : Երբեմն գրեն այլ ոմանք թէ Յուսէի եւ կամ արդար Իսահակ վարդապետն են շինեալ, բայց թէ Դաւիթն ասել իրաւ է : Եւ տաճարն միայն վերստին շինող եւ նորոգող Չարաբիս եպիսկոպոսն է պարոն Մանուշէի որդի եւ որդէս

վախմ կը ստանայ Ս. Թաղէի համար (Թօփձեան, Յուլ. հայ. Ձեռ. Դաղ. Վրդ., Բ., էջ 15) :

Ապա Ղուկաս կաթողիկոս Թաղէի առաջնորդ կը կարգէ Գէորդ վարդապետը (եպիսկոպոս) եւ անոր նկատմամբ յատուկ սէր ու համակրանք ունենալով գիմում կը կատարէ Խոյի խանին, որ գիւրութիւններ ընծայէ անոր վանքին բարեգարգութեան համար (Դիւան, Դ., էջ 563—565, 1792) : Գէորդ կաթողիկոսական հերձուածի ատեն կարապետ վարդապետի հետ Դանիէլ կաթ. ի կողմը կ'ելլէ (Դիւան, Դ., էջ 234 եւ 235) : Եւ այս պատճառով ալ Դաւիթ կաթողիկոսէն իր առաջնորդական աթոռէն կը զրկուի, սակայն ետքէն նոյն կաթողիկոսը զինքը վերստին իր աթոռին վրայ կը հաստատէ (Դիւան, Է., էջ 348—351) : Գէորդի իրբեւ յաջորդ Դաւիթ ժողովրդեան ցանկութեան վրայ կ'ուղէ կարգել «ղԱռաքել վարդապետ» (Անդ, էջ 423) :

Բայց ետքէն առաջնորդ կը դնէ Սիմէոն վարդապետ (արքեպիսկոպոս), որ ինչպէս վանքին ու եկեղեցւոյ նկարագրութեան մէջ յայտնի կը տեսնուի, շատ մեծ արժանիք ունի Ս. Թաղէի վրայ : Նա 1810ին թղթով մը «Ի հրաշագարդ գրանէ եւ ի զիր մաքուր սրբոց շիրմէ լուսածորան եւ աստուածաբնակ դերամաքուր եւ գերահարչ դամբարանէ նախկին Լուսաւորչին մերոյ եւ ընտրեալ մեծի սրբազնասուրբ Առաքելոյն Թաղէոսի» իրբեւ առաջնորդ եւ արքեպիսկոպոս կը լիազորէ Առաքել վարդապետը հանդանակութիւն ընելու՝ պատմելով վանքին Պարսիկներէն կողմուրդուելին ու աւերուելը. կը խոստանայ չիւնել ջրաղաց, տնտեսատուն, սեղանատուն եւ միարաններու սենեակներ (Թօփձեան, Յուլ. հայ. Ձեռ. Դաղ. Վ., Բ., էջ 16) :

գրեալ զայ աջ կողմն ի վերայ աւազանին տեղովն» (Նոյն՝ Անդ, էջ 185) :

«ԹՎ. ՌՄԼԵին Փառակեցի տէր Իսահակ արքեպիսկոպոսն եւ առաջնորդ սուրբ աթոռոյն Թաղէոսի ձեռնադրեալ ի Սիմէոն սրբազան կաթողիկոսն մինչեւ վերջ գրեալ թուոյն Գ. ամաւ առաջնորդ եղեալ էր» (Նոյն՝ Անդ, էջ 216) :

«Բուրաստանս իմաստասիրական յիշատակ է Իսահակ վարդապետին Մակունեցւոյ առաջնորդի սուրբ Աթոռոյն Թաղէոսի սուրբ Առաքելոյն... : Ի կենարարին թիփլիս ՌՈՂԷ ամի եւ ի մերումս թուահաշուութեան ՌձԲՁ գրեցաւ ձեռամբ իմով» (տարբեր գրով)՝ «Վերջոյգրեալ Իսահակ Արղար յառաջնորդ Լուսահողի վարդապետին տեղն արժանուն աջորդ եղէ անարժան հողի մօրիս Իսահակ եպիսկոպոս Փառակեցի ՌՄԼԱին... : ՌՄԼԲ թուոյն գրեցի» (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. 340, 35, Բանք Իմաստասիրականը Ստ. Լեհացոյ) :

Սիմէոն ²⁶ ուժեղ կամքով դործի կը ձեռնարկէ, կը նորոգէ եկեղեցին, առաջնորդաբանն ու ուրիշ սենեակներ, սակայն հակառակ այնքան ծանր աշխատանքին ու շատ ծախքին արդիւնքը մեծ բան չըլլար (Փրանկեան, Ատրպատական, էջ 30 եւ 38) :

Վերջին դարուս առաջնորդներէն յիշենք համառօտիւ՝

1. Իսրայէլ որ միանգամայն Ատրպատականի առաջնորդ էր եւ Ներսէս Աշտարակեցիի քաղաքականութեան հակառակ (համաժ. Ս. Բարթողիմէոսի վանքը եւ Աճէմեան Հայկ, Պատմութիւն Արամեան Աղղային զպրոցի, Թաւրիզ, էջ 12) :

2. Բարսեղ արքեպ. Կեսարացի, աղղեցիկ անձ մը, որ կը ջանայ Ատրպատականի առաջնորդարանը Ս. Թաղէոսի վանքէն Թաւրիզ փոխադրել, սակայն չի յաջողիր : Անիկա թղթով մը վանքին շինութեան համար վարդապետ մը դրամ հաւաքելու կը զրկէ եւ անոր մէջ կ'ըսէ՝ «Ահա այս եօթ ամէ որ սկիզբն արարեալ եմք սրբոց վանիցս հիմնարկութեան, եւթն ամս եւս հաղիւ կարեմք շնորհիւ Տեառն գլխաւորել... այս ձեւ սորին (տաճարին) քառանկիւնի լայնութեամբ եւ խաչանիւ խօրանօք, անհամար բարձրութեամբ եւ հնգեակ կաթողիկէին, չորրորդ սիւնք ի միջի եւ յեօթն սեղանք զանազան յօրինուածովք ի հիմանց մինչեւ ի վեր ձիւնափայլ սպիտակադոյն քարին... սրբատաշ քերեալ» (Թօփձեան, Յուլ. հայ. Ձեռ. Դաղ. Վրդ., էջ 16, ուր եւ թուղթ նորին առ քահանայս Թմպուլ գեղջ եւ նուիրատուութիւններ, էջ 15) :

3. Նիկողայոս Կարբեցի, որ Ս. Թաղէի եւ Ս. Բարդուղիմէոսի վանքերու առաջնորդութիւնները կը միացնէ եւ առաջնորդարան մը կը շինէ Թաւրիզի մէջ, որ Ներսէս Աշտարակեցիին քաղաքականութեան հետեւող եղաւ, եւ մեռաւ 1850ին (Աճէմեան, Անդ, էջ 12—20 եւ Թօփձեան, Յուլ. հայ., էջ 12) :

4. Սահակ եպ. Սաթունեան, որ Աշտարակ ծնած է 1791ին եւ 1850ին Ներսէս Աշտարակեցիէն Ս. Թաղէի եւ Ատրպատականի առաջնորդ կը նշանակուի : Նա առաջնորդա-

²⁶ Սիմէոնի օրով վանքին նուէր կը տրուին քանի մը կալուածներ համա. Թօփձեան, Յուլ. հայ. Ձեռ. Դաղ. Վ. Բ., էջ 15—16) : — Մ. Խորենացւոյ բնական հրա., էջ 109 յառաջարան. համա. Աճառեան, Յուլ. հայ. Ձեռ. Թաւրիզի, էջ 20) : պատմութեան Ձեռագրի մը պահպանակին վրայ կայ՝ «Վարդապետ Գալուստն եւ Սիմէոն վարդապետս առաջնորդ սրբազան առաքելոյն Թաղէոսի ի յիշատակ ծնողացն թուին ՌՄԹԷ» (Մ. Խորենացւոյ Պատմութեան

կան աթոռը Ս. Թաղէի վանքէն մշտապէս Թաւրիզ կը փոխադրէ եւ անոր Ղարապաղի ժողովրդեան ըրած նուիրատուութեանց համար շնորհակալութեան թուղթ կը գրէ : Լաւ դործունէութիւն ունեցած է. կը մեռնի 1857ին (համաժ. Աճէմեան Հ., Անդ, էջ 20—52, Թօփձեան, Յուլ. հայ. Ձեռ. Թաւրիզի, էջ 16—17. Փրանկեան, Ատրպատական, էջ 35) :

Վերոյիշեալներէն դատ Ս. Թաղէի վանքի վանահայր եղած են Փիլիպպոս ²⁷, Յովհաննէս Բաղունի, Եսայի Յովսէփեան, Գէորդ Նալբանդեան, Պետրոս Ղաղարեան, եւ Դանիէլ Չատոյեան վարդապետները (համաժ. Աճառեան, Յուլ. հայ. Ձեռ. Թաւրիզի թ. 56. Փրանկեան, Ատրպատական, էջ 33—41. Մուրճ, 1902, Թ. ԺԲ., էջ 40, 1903, Ը., էջ 134, 136. Տաթեւ Տարեգիրք, 1929, էջ 365. Ընդարձակ Տարեցոյց Աղղ. Հիւանդանոցի Կ. Պ., 1927, էջ 387. Մշակ, 1902, Թ. 52. Ասպարէզ, 1939, Թ. 1871) :

Արտագու Ս. Թաղէի վանքը, ուր պահուած է եղեր վարդան Մամիկոնեանի ճկոյթը (Շէրենց, Սրբավայրեր, էջ 26), թէեւ ստէպ աւերումներու ենթարկուած է, սակայն բարեբաստօրէն ունեցած է գործնական եւ կարող վանահայր-առաջնորդներ, որոնք զայն վերանորոգած են : Ժողովուրդն անոր հետ կապուած էր իրբեւ Արտաղի առաջնորդարան-եպիսկոպոստարանի հետ եւ հաւանօրէն այդ պատճառով ալ անոր դրամական ու հողային առատ նուէրներ ու նպաստներ ըրած : Ս. Թաղէի վերաբերեալ գիւղերն էին՝ Մըզրա, Իւմրիդաշ, Ղարաքիլիսէ, Դիպակաշ, Աղբուլաղ, Ղարաթուրքի, Սոնա-Բուլաղ, Աղղաշ, Մահալազան, Ղուրուղ, Նուշիկ, Քէհհրեփան, Չորս, Ռահան (Փրանկեան, Ատրպատական, էջ 31. Մուրճ, 1903, Ը., էջ 127) : Դարձեալ ունէր եւ ունի գեո վարելահողեր եւ անտառներ, արտեր ու զաշտեր, այգիներ եւ տներ (Փրանկեան, Ատրպատական, էջ 31. Էփրիկեան, Բնաշխ. Բառարան, Բ., էջ 3. Արարատ, 1898, էջ 38 եւ Բաֆֆի, Խամսայի մեղիքութիւններ, էջ 260. Վաճառական, 1866, էջ 68. Արշ. Արարատեան, 1866, Թ. 790) :

Ս. Թաղէի արդի վիճակը շատ աղաւաղելի է : Անխնամ ձգուած է (Պալքանեան Մամուլ, 1941, Թ. 515) :

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

²⁷ Փիլիպպոսի օրով Մեկիք Միբղայ Ս. Թաղէի Տօնական մը կու տայ եւ կարապետ արեղայ անիէ կը հեռանայ (Աճառեան, Յուլ. հայ. Ձեռ. Թաւրիզի, էջ 121) :